


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**



**ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ  
Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58  
Ա 390

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**Աշխատանքները համակարգող՝ Արսեն Լոքյան**

**Կազմողներ՝ Ավետիս Գևորգյան  
Գայանե Հովհաննիսյան**

**Ա 390**

**Ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա կրթական ծրագրերի մշակման մեթոդական ցուցումներ.-եր.:** ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2013. - 89 էջ:

Մեթոդական ցուցումներում ներկայացված են Բոլոնիայի գործընթացի նպատակն ու խնդիրները, Բոլոնիայի գործընթացի գործողությունների սահմանված 10 ուղղությունները և հիմնական մարտահրավերները, թյունինգյան մեթոդաբանության կիրառման նպատակները, հիմունքները և մոտեցումները, դրանում օգտագործվող կրթական կողմնորոշիչները, կրթական ծրագրերի վերակառուցման փուլերը, ինչպես նաև մեթոդական ուղենիշներ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրեր կազմելու և իրականացնելու համար: Անդրադարձ է կատարվում վերջնարդյունքների ձևավորման համար սովորողի կողմից ձեռք բերվող ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների ցանկին:

Սույն մեթոդական ցուցումների համար հիմք են ծառայել ոլորտում առկա մեթոդական ուղեցույցները, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից մշակված աշխատանքային նյութերը, այլ բուհերի փորձի ուսումնասիրության արդյունքները:

Առաջարկվող մեթոդական ցուցումները հասցեագրված են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի անձնակազմին, սովորողներին:

**ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58**

ISBN 978-99930-68-35-8

© ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2013

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ .....	4
«ԹՅՈՒՆԻՆԳ» (TUNING) ՆԱԽԱԳԾԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ .....	13
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ «ԹՅՈՒՆԻՆԳ» ՆԱԽԱԳԾՈՒՄ .....	18
ԹՅՈՒՆԻՆԳՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ .....	22
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	27
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ .....	43
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	48
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	89

## ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾՆԹԱՅ<sup>1</sup>

Բոլոնիայի գործընթացը միջպետական նախաձեռնություն է, որի նպատակն է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և նպաստել Եվրոպական բարձրագույն կրթության գրավչությանն ու մրցունակությանը ողջ աշխարհում: Գործընթացն ընթանում է Եվրոպական միության (ԵՄ) որոշումների ընդունման ձևական շրջանակներից դուրս: Որոշումների ընդունումն այստեղ հենվում է մասնակից բոլոր երկրների համաձայնության վրա:

Բոլոնիայի գործընթացը մեկնարկել է 1999 թվականին: Համաձայն Բոլոնիայի հիմնադիր հռչակագրի՝ ԵԲԿՏ-ն պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձրորակ բարձրագույն կրթության հնարավորություն է ընձեռնվում: Այսպիսի բաց տարածքի անկյունաքարերն են՝ բարձրագույն կրթության որակավորումների փոխձանաչումը, թափանցիկությունը և Եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում:

Բարձրագույն կրթության և ընդհանրապես Եվրոպայով մեկ մարդկային ռեսուրսների որակի բարելավման իր մղվածությամբ Բոլոնիայի գործընթացը կոչված է առանցքային դեր խաղալու ԵՄ Լիսաբոնյան ստրատեգիայի նպատակների ձեռքբերման մեջ, որոնք հավակնում են ապահովելու երկարատև կայուն տնտեսական աճ, ստեղծելու ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղեր:

ԵԲԿՏ-ի մյուս կարևոր առանձնահատկությունը Եվրոպական բարձրագույն կրթության ընդգծված սոցիալական ուղղվածությունն է, որը ենթադրում է սովորելու, մասնագիտական և ընդհանուր զարգացման հավասար հնարավորություններ բոլորի համար՝ հարատև կրթության համատեքստում:

---

<sup>1</sup> Սարգսյան Յու.Լ., Բուդաղյան Ա.Ս., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց. Ձեկույց/, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., Անտարես, 2008, 74 էջ

Բոլոնիայի գործընթացի հետագա ընթացքը և նոր զարգացումներն ուղղորդվում են անդամ երկրների նախարարական գագաթաժողովների միջոցով:

### **Բոլոնիայի գործընթացի նպատակը և խնդիրները**

Բոլոնիայի գործընթացի նպատակն է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և աջակցել բարձրագույն կրթության եվրոպական մոդելների տարածմանը ամբողջ աշխարհում: Կան մի շարք առանցքային ոլորտներ, որոնց ուղղությամբ գործընթացը հասկապես կենտրոնանում է իր նպատակին հասնելու համար: Դրանք հայտնի են նաև որպես Բոլոնիայի գործընթացի խնդիրներ:

- Ուսանողների և դասախոսների շարժունության խոչընդոտների վերացումը Եվրոպայի ներսում, ինչպես նաև դրսի ուսանողների համար դիտվում է որպես կարևորագույն գործոն ԵԲԿՏ-ի կառուցման ճանապարհին: Ընդլայնված շարժունությունն ապահովում է ուսանողների և դասախոսների կարիերայի ավելի մեծ հնարավորություններ եվրոպական աշխատաշուկայում:

- Եվրոպական բարձրագույն կրթության համար անհրաժեշտ է համարվել ներմուծել բակալավրի և մագիստրոսի 2 աստիճանների վրա հիմնված ընդհանուր համակարգ: Համակարգի ընդգրկումն այնուհետև ընդլայնվեց այս երկու աստիճաններից դուրս այնպես, որ այժմ դոկտորական մակարդակի որակավորումները դիտարկվում են որպես երրորդ աստիճան Բոլոնիայի գործընթացում: Դա հնարավորություն կտա խթանելու ավելի սերտ կապերի ձևավորումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) միջև:

- Դյուրընթեռնելի և համադրելի որակավորումների համակարգի ներմուծումը կպարզեցնի որակավորումների համեմատումը ողջ Եվրոպայում, իսկ դրանով ապահովվող ճկունությունը և թափանցիկությունը ուսանողներին և դասախոսներին իրենց որակավորումների ավելի լայն ճանաչման հնարավորություն կտան՝ նպաստելով շարժունության ազատությանը ավելի ու ավելի թափանցիկ դարձող ԵԲԿՏ-ի շրջանակներում: Այս գործընթացին կօժանդակի բոլոր մասնակից

երկրներում կրեդիտների համակարգի հիմնումը՝ կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի և դիպլոմի հավելվածի ներմուծմամբ:

- Եվրոպայում բարձրագույն կրթության որակի բարելավումը և բարձր ստանդարտների ապահովումը միջազգային ասպարեզում ԵԲԿՏ-ն գրավիչ դարձնելու հիմնական բանալիներն են: Որակի ապահովման ասպարեզում եվրոպական մակարդակով համագործակցությունը և որակի հավաստման մարմինների համարժեք արտաքին փորձաքննության ապահովումը կօգնեն հասնելու որակի ընդհանուր բարձր ստանդարտների ապահովմանը ամբողջ Եվրոպայում՝ դյուրացնելով նաև որակավորումների համադրելիությունը:

- Բուհերը և ուսանողները կարևոր դերակատարություն ունեն Բոլոնիայի գործընթացում. համապատասխանաբար կարևորվում է նրանց ներգրավումը տարբերացված և հարմարունակ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ձևավորման գործընթացում:

- Բոլոնիայի գործընթացն իր զորակցությունն է ցուցաբերում հարատև ուսումնառության գաղափարի ներդրմանը Եվրոպայում, ինչը կարևորվում է գլոբալ աշխատաշուկայում աճող մրցակցության մարտահրավերների դիմագրավմանը և նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործմանը նպաստելու տեսանկյունից:

- Բուհերը պետք է մշակեն էական և ընդհանուր եվրոպական բովանդակությամբ դասընթացներ և կրթական ծրագրեր՝ բարձրագույն կրթության եվրոպական չափայնությունն ուժեղացնելու նպատակով: Սա ենթադրում է նաև եվրոպական բուհերի միջև գործակցային կապերի ու համատեղ ծրագրային մշակումների խթանում, ինչպես նաև համատեղ որակավորումների հիմնում:

Բոլոնիայի, Պրագայի և Բեռլինի գագաթաժողովներում այս խնդիրները ձևակերպվեցին որպես Բոլոնիայի գործողությունների 10 ուղղություններ:

**Բոլոնիայի գործընթացի գործողությունների 10 ուղղությունները.**

*Սահմանված են 1999 թվականին Բոլոնիայի հռչակագրով.*

1. դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում,
2. հիմնականում երեք աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում,

3. կրեդիտների համակարգի հիմնում,
4. աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական ու վարչական կազմի շարժունությանը,
5. աջակցություն որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցությանը,
6. բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում.  
*ներմուծված են 2001 թվականին Պրագայի կոմյունիկեով.*
7. հարատև կրթության կարևորում,
8. բուհերի և ուսանողների ներգրավում,
9. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչության խթանում,  
*լրացված է 2003 թվականին Բեռլինի կոմյունիկեով.*

10. դոկտորական ծրագիրը և սինեթիկ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև:

**Հիմնական մարտահրավերներ<sup>2</sup>**

- Մեծ է ռիսկը, որ Բոլոնիայի գործընթացը որոշ երկրներում և բուհերում կարող է վերածվել ձևական «թղթային» բյուրոկրատական գործընթացի, որը շատ փոքր ազդեցություն կունենա բարձրագույն կրթության ռեալ իրավիճակի վրա: Ակնհայտ է, որ այս ռիսկը էապես կնվազի, եթե պահպանվեն գործընթացի քաղաքական կովաններն ու կարևորությունը եվրոպական և ազգային մակարդակներում: Այս առումով կարևորվում է սոցիալական մեծ նշանակություն ունեցող լայնամասշտաբ և համալիր խնդիրների առաջադրումը Բոլոնիայի գործընթացի հետագա ընթացքն ուղղորդելու համար:

- Մտահոգիչ են նաև անդամ երկրներում Բոլոնիայի գործընթացի իրականացման զգալիորեն տարբերվող տեմպերն ու մակարդակը, որը խանգարում է ԵԲԿՏ ընդհանուր բնութագրերի և հատկապես համադրելիության ու համեմատելիության ձեռքբերմանը: Այս անհամամասնություն-

---

<sup>2</sup> Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում. Զեկույց/ Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն. - Երևան, Փրինսիփսֆո, 2012, - 228 էջ, 26-30 էջեր

ների վերացման գործում բացասական գործոն է Բոլոնիայի ռեֆորմներին ֆինանսական աջակցության ռեսուրսների պակասը կամ բացակայությունը Բոլոնիայի անդամ մի շարք երկրներում: Այս տարբերությունները հատկապես տեսանելի են ուսանողական շարժունության ֆինանսավորման ցուցանիշներում: Ակնհայտ է ԵԲԿՏ-ում Բոլոնիայի բարեփոխումների ֆինանսական աջակցության համակարգման և այս բնագավառում Եվրախորհրդի և առանձին երկրների ներդրումների համաձայնեցման անհրաժեշտությունը:

- ԵԲԿՏ ճարտարապետության բոլոր հիմնական տարրերն առավելապես մշակված են, և այսօր կարևորագույն մարտահրավեր է այս կառուցվածքները դարձնել այնպիսի իրականություն, որն ընկալվում և պաշտպանվում է ուսանողների և դասախոսների կողմից: Այս գործընթացում կատալիտիկ դեր ունի ակադեմիական և հատկապես ուսանողական կարճատև «կրեդիտային» շարժունությունը, որն էլ պետք է արժևորի ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության արդյունքների համադրելիության ելակետային գաղափարը:

- ԵԲԿՏ ճարտարապետության և բարձրագույն կրթության արդյունքների ակնկալվող համաեվրոպական համադրելիության հիմնասյունը որակավորումների նորաստեղծ ազգային շրջանակների համակարգն է: Դրանք կրիտիկական նշանակություն ունեն ԵԲԿՏ փաստական իրականացման համար և մինչև 2012 թվականը (Լյովեն, 2009) դրանց պլանավորված մշակումը հիմք կծառայի, որպեսզի ԵԲԿՏ և՛ կառուցվածքը, և՛ բովանդակությունը իրականություն դառնան մինչև 2020 թվականը:

### **Բոլոնիայի գործընթաց-2020. ԵԲԿՏ Լյովենյան ուղենիշները նոր տասնամյակում**

Բոլոնիայի անդամ երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարները 2009թ. Լյովենի կոմյունիկեով արձանագրեցին ԵԲԿՏ զարգացման որոշակի գերակայությունների ուղենիշներ 2010-2020 տասնամյակի համար: Գազաթաժողովի հանձնարարությամբ Բոլոնիայի աշխատանքային խումբը (BFUG) մշակել և 2009թ. նոյեմբերին Բրյուսելում ընդունել է աշխատանքային պլան 2009-



2012թթ. համար՝ ըստ վերը նշված գերակայությունների: Ստորև ներկայացվում են Կոմյունիկեում և աշխատանքային պլանում առաջադրված գերակայությունների որոշակի ուղենիշներ:

**• Սոցիալական չափայնություն, ընդունելության և շրջանավարտության հավասար հնարավորություններ.**

- Ի նպաստ որակյալ կրթության՝ ստեղծել հավասար հնարավորություններ սոցիալական տարբեր, անբավարար ներկայացված խմբերի համար:

- Վերացնել բոլոր խոչընդոտները, ստեղծել անհրաժեշտ կրթական միջավայր և համապատասխան տնտեսական պայմաններ բոլոր մակարդակներում բարձրագույն կրթության հնարավորություններից անարգել օգտվելու համար:

- Յուրաքանչյուր մասնակից երկիր պետք է տասնամյակի կտրվածքով սահմանի չափելի թիրախներ բարձրագույն կրթության ծրագրերում ընդհանուր ներգրավվածության և անբավարար չափով ներկայացված սոցիալական խմբերի մասնակցության ցուցանիշների բարելավման համար, մշակի ինդիկատորներ և մեխանիզմներ առաջընթացի չափման և մոնիթորինգի համար:

- Բարձրացնել բուհերի պատասխանատվությունը իրենց շրջանավարտների սոցիալական հեռանկարների (ծառայունակություն, կարիերայի հնարավորություններ և այլն) ապահովման հարցում:

**• Հարատև կրթություն**

- Ընդլայնված ներգրավվածությունը պետք է ձեռք բերվի նաև հարատև կրթության միջոցով՝ որպես կրթության համակարգերի անբաժանելի կառուցամաս: Այն ներառում է որակավորումների շնորհումը, նոր հմտությունների և կոմպետենցիաների ձևավորումը, գիտելիքների հարստացումը՝ ճկուն կրթական ուղեգծերի, աշխատանքի հետ համատեղված ուսուցման կիրառմամբ:

- Հարատև կրթության քաղաքականության իրականացումը պահանջում է ամուր գործակցային կապերի ստեղծում պետական կառույցների, բուհերի, գործատուների և սովորողների միջև: Այն պետք է սատարվի

համարժեք կազմակերպական կառույցների և ֆինանսական ռեսուրսների ձևավորմամբ:

- Որակավորումների ազգային շրջանակների ստեղծումը կարևորագույն քայլ է հարատև կրթության իրականացման ճանապարհին: Այս գործընթացը հարատև կրթության եվրոպական որակավորումների շրջանակի հետ միասին ԵԲԿՏ մակարդակով շարունակական կորդինացում է պահանջում:

**• Ծառայունակություն**

- Բարձրագույն կրթությունը ուսանողներին իրենց ողջ մասնագիտական կյանքում պետք է օժտի անհրաժեշտ ձիրքերով, կոմպետենցիաներով և առաջավոր գիտելիքներով:

- Բուհերը կառավարական կառույցների և գործատուների հետ համատեղ պետք է բարելավեն իրենց կարիերայի և աշխատատեղերի որոնմանն աջակցող ծառայությունների որակն ու մատչելիությունը ուսանողների և շրջանավարտների համար:

- Պետք է խթանել կրթական ծրագրերում ներդրված աշխատանքային փորձաշրջանները, աշխատանքի հետ համատեղված ուսուցման ձևերը:

**• Ուսանողակենտրոն ուսուցումը և դասավանդման առաքելությունը բարձրագույն կրթության ծրագրերում**

- Նախարարները վերահաստատում են դասավանդման կարևորությունը բարձրագույն կրթության ասպարեզում և դեպի **կրթական վերջնարդյունքները կողմնորոշված** ծրագրային ռեֆորմի անհրաժեշտությունը:

- Ուսանողակենտրոն ուսուցումը պահանջում է դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումներ, անհատականացված ուսուցման աջակցություն և ուղղորդման արդյունավետ կառուցվածքներ, դեպի սովորողը կողմնորոշված ծրագրեր բարձրագույն կրթության բոլոր 3 աստիճաններում:

- Բուհերը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն իրենց կրթական ծրագրերում դասավանդման որակի բարձրացմանը բոլոր մակարդակներում, ինչը պետք է առաջնայնություն ստանա որակի ապահովման

Եվրոպական ստանդարտների և ուղենիշների իրականացման գործընթացում:

**• Կրթություն, գիտական հետազոտություն և ինովացիա**

- Բարձրագույն կրթությունը բոլոր աստիճաններում պետք է հիմնված լինի արդի գիտական հետազոտությունների և մշակումների վրա և, այսպիսով, խթանի ինովացիան և ստեղծագործականությունը հասարակության մեջ:

- Դոկտորական ծրագրերը պետք է ապահովեն բարձրորակ հետազոտություններ մասնագիտական առանձին ասպարեզներում և հետզհետե լրացվեն միջառարկայական և միջճյուղային ծրագրերով:

- Համապատասխանաբար պետք է աճի հետազոտական կոմպետենցիաներով օժտված շրջանավարտների թիվը, իսկ բուհերը և պետական իշխանության մարմինները պետք է ձգտեն ավելի գրավիչ դարձնելու վաղ շրջանում գտնվող հետազոտողների կարիերայի հնարավորությունները:

**• Միջազգայնորեն բաց եվրոպական բարձրագույն կրթություն**

- Եվրոպական բուհերը պետք է շարունակեն միջազգայնացնել իրենց գործունեությունը և ներգրավվեն կայուն զարգացմանն ուղղված գլոբալ համագործակցության գործընթացներում:

- Եվրոպական բարձրագույն կրթության գրավչությունն ու բաց բնույթը պետք է ամրապնդվեն համատեղ եվրոպական գործողություններով:

- Գլոբալ մասշտաբով մրցակցությունը պետք է համալրվի երկխոսությամբ և համագործակցությամբ աշխարհի այլ տարածաշրջանների հետ:

**• Շարժունություն**

- Նախարարները դիմում են մասնակից յուրաքանչյուր երկրին՝ մեծացնելու շարժունությունը, ապահովելու դրա բարձր որակը և բազմազանեցնելու իրականացման ձևերն ու ընդգրկման շրջանակը: 2020 թվականին ԵԲԿՏ-ի բուհերի շրջանավարտների առնվազն 20%-ը պետք է ուսուցման կամ վարժանքային որևէ շրջան անցնի արտասահմանում:

- Երեք աստիճաններից յուրաքանչյուրի շրջանակներում շարժունության հնարավորություններ պետք է ստեղծվեն անմիջապես կրթական ծրագրերի կառուցվածքում: Համատեղ որակավորումներն ու ծրագրերը, ինչպես նաև ծրագրերում շարժունության պատուհանները

պետք է ընդհանուր պրակտիկա դառնան: Ավելին, շարժունության գործողությունները պետք է պարունակեն գործնական միջոցներ շարժունության ֆինանսավորման, արդյունքների ճանաչման, անհրաժեշտ ենթակառուցվածքի, մուտքի արտոնության և աշխատանքի թույլտվության վերաբերյալ:

- Շարժունության համար անհրաժեշտ պահանջներ պետք է դարձնել ուսուցման արդյունքների լիարժեք ճանաչումը, ուսումնական դրամաշնորհների, կրթաթոշակների և ուսանողական վարկերի տեղափոխելիությունը: Պետք է հասնել գործուղվող և ժամանող ուսանողների հավասարակշռված հոսքի և ուսանողական տարբեր խմբերի բարելավված մասնակցության ցուցանիշների Եվրոպական բարձրագույն կրթության ողջ տարածքում:

- Պետք է ստեղծել գրավիչ աշխատանքային պայմաններ, ազատ միջազգային հավաքագրման և կարիերային աճի հնարավորություններ դասախոսների և հետազոտողների շարժունության խթանման համար՝ ապահովելով սոցիալական ապահովագրություն և կենսաթոշակների տեղափոխման պայմաններ:

**• Թափանցիկության բազմաչափ գործիքներ**

- Շարունակելով ԵԲԿՏ բուհերի բազմազանության թափանցիկության բարձրացմանն ուղղված առկա նախաձեռնությունները՝ պետք է ստեղծել նոր տեղեկատվական մեխանիզմներ, որոնք կօգնեն բարձրագույն կրթության ազգային համակարգերին և բուհերին բացահայտելու և համադրելու իրենց համեմատական առավելությունները և թուլությունները:

- Թափանցիկության նոր գործիքները պետք է անմիջականորեն համապատասխանեն Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին, մասնավորապես, որակի ապահովման փոխճանաչման սկզբունքներին և միաժամանակ հիմնվեն համարժեք ինդիկատորների և համեմատելի տվյալների վրա բուհերի և նրանց ծրագրերի տարբեր պրոֆիլների նկարագրության համար:

**• Ֆինանսավորում**

- Նախարարները հաստատում են, որ պետական ֆինանսավորումը մնում է որպես հիմնական գերակայություն ինքնավար բուհերի հետագա կայուն զարգացումը երաշխավորելու համար:

- Բուհերը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն ֆինանսավորման նոր և տարբերացված աղբյուրների և ձևերի որոնմանը:

## **«ԹՅՈՒՆԻՆԳ» (TUNING) ՆԱԽԱԳԾԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Նոր սերնդի կրթական ծրագրերի նախագծման և իրականացման գործընթացներում էական ջանքեր և ռեսուրսներ են հարկավոր կրթական վերջնարդյունքների համարժեք ընկալման և արդյունավետ օգտագործման համար: Այս համատեքստում կարևորվում է «Թյունինգ» մեթոդաբանության ներմուծումը կրթական ծրագրերի պլանավորման, մշակման և իրականացման փուլերում առանձին մասնագիտական ասպարեզներում:

«Կրթական կառույցների կարգաբերումը Եվրոպայում» (Tuning Educational Structures in Europe) նախագծի նպատակն է բուհերում և առարկայական ոլորտներում առաջարկել բազմակողմանի մոտեցում Բոլոնիայի գործընթացի խնդիրների իրականացման ուղղությամբ: Նախագիծը յուրաքանչյուր շրջափուլի (մակարդակի) համար առաջարկում է կրթական ծրագրերի մշակման, իրագործման և գնահատման մեթոդաբանություն<sup>3</sup>: Բացի այդ, «Թյունինգը» առարկայական տարբեր ոլորտներում ծրագրային կողմնորոշիչներ մշակելու մեթոդաբանական հենք է, ինչը հատկապես կարևոր է կրթական ծրագրերը համեմատելի, համադրելի և թափանցիկ դարձնելու տեսանկյունից: Այդ կողմնորոշիչները ձևակերպվում են կրթական վերջնարդյունքների և կոմպետենցիաների տեսքով<sup>4</sup>:

**Կրթական վերջնարդյունքները** ակնկալվող ցուցանիշներ են, որոնք նկարագրում են, թե ծրագրի ավարտին ինչ պետք է իմանա, հասկանա և/կամ կարողանա կատարել սովորողը ուսուցման ավարտին: «Թյունինգ»

---

<sup>3</sup> Настройка образовательных структур в Европе. Вклад университетов в Болонский процесс. [http://www.hse.ru/data/2010/12/10/1218620004/Introduction\\_Tuning%20Educational%20Structures.pdf](http://www.hse.ru/data/2010/12/10/1218620004/Introduction_Tuning%20Educational%20Structures.pdf)

<sup>4</sup> Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ, 7-10 էջեր:

նախագծի շրջանակներում կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են որպես սովորողի կողմից ձեռք բերվող կոմպետենցիաներ:

**Կոմպետենցիան** գիտելիքի, իմացության, հմտությունների և կարողությունների դինամիկ համակցություն է: Կոմպետենցիաների զարգացումը կրթական ծրագրերի նպատակն է: Կոմպետենցիաները զարգանում են ծրագրում ներառված բոլոր դասընթացների շրջանակներում և գնահատվում կրթական ծրագրի տարբեր փուլերում: Դրանց մի մասն առնչվում է ուսումնառության մասնագիտական ոլորտին (այսպես կոչված՝ բուն մասնագիտական կոմպետենցիաներ), մյուսն ընդհանուր է տվյալ որակավորման ցանկացած ծրագրի համար (այսպես կոչված՝ ընդհանրական կոմպետենցիաներ):

Եռաստիճան կրթական համակարգի (բակալավրիատ-մագիստրատուրա-դոկտորանտուրա) ներմուծումը միևնույն ժամանակ ենթադրում է անցում այսպես կոչված դասախոսակենտրոն մոտեցումից (երբ կրթական գործընթացի գլխավոր դերակատարը դասախոսն է) դեպի ուսանողակենտրոն կողմնորոշում, որի առանցքն ուսանողն է, ում պետք է հնարավորինս նախապատրաստել իր ապագա մասնագիտական և հանրային գործունեությանը:

*Աղյուսակ 1.*

**Դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն ուսուցում**

<b>Դասախոսակենտրոն</b>	<b>Ուսանողակենտրոն</b>
<p>Այն, թե ինչ բովանդակությամբ նյութ պետք է ուսուցանել, ինչպես ուսուցանել և գնահատել ուսանողի կողմից ձեռք բերված նյութը, դասախոսը որոշում է, օրինակ, ելնելով <i>իր սեփական նախասիրություններից, ունեցած ռեսուրսներից, ուժեղ և թույլ կողմերից:</i></p>	<p>Այն, թե ինչ բովանդակությամբ նյութ պետք է ուսուցանել, ինչպես ուսուցանել և գնահատել ուսանողի կողմից ձեռք բերված նյութը, դասախոսը որոշում է, ելնելով նրանից, <i>թե ուսանողներն ինչ պետք է կարողանան անել մոդուլի կամ ծրագրի ավարտին:</i> Ըստ այդմ, դասախոսը վերանայում է ռեսուրսները, մշակում նոր մոտեցումներ ու հանդես գալիս ուղղորդողի դերում:</p>

<p>Դասընթացի նկարագրությունը վերաբերում է գլխավորապես դասընթացի բովանդակությանը, որը պետք է փոխանցվի ուսանողների դասախոսությունների ժամանակ:</p>	<p>Նախանշված ուսումնառության արդյունքները նկարագրում են, թե ուսանողներն ինչ պետք է կարողանան անել ուսումնառության ավարտին: Սա հնարավորություն է տալիս անհատական մոտեցում ցուցաբերելու յուրաքանչյուր ուսանողի կարիքների և շարժունակության նկատմամբ:</p>
<p>Ուսումնառության նպատակները ձևակերպված չեն ուսանողների տեսանկյունից, հստակ չեն ուսանողների համար, ինչը խանգարում է նրանց՝ գնահատելու դասընթացի իրական արժեքը:</p>	<p>Ուսումնառության արդյունքները նկարագրված են ուսանողներին հասկանալի տերմիններով, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ակտիվ մասնակցելու ծրագրի գնահատմանը և որակի ապահովմանը:</p>
<p><b>Միտված է բովանդակությանը</b></p>	<p><b>Միտված է վերջնարդյունքներին<sup>5</sup></b></p>

Այդ իսկ պատճառով «Թյունինգ» նախագծում իրականացվել է գործատուների, շրջանավարտների և դասախոսական կազմի հետ խորհրդակցությունների համաեվրոպական մի գործընթաց՝ բացահայտելու ինչպես ընդհանրական, այնպես էլ տարբեր առարկայական ոլորտների համար առավել բնորոշ բուն մասնագիտական կոմպետենցիաները, որոնք պետք է ձևավորի համապատասխան կրթական ծրագիրը:

«Թյունինգ» նախագիծը, բացի եռաստիճան համակարգի ներդրման համար գործնական հենք մշակելուց, նաև կիրառական մի նոր մոտեցում է ձևավորում Բոլոնիայի գործընթացի մեկ այլ կարևորագույն ուղղության՝ կրեդիտային համակարգի ներդրման նկատմամբ: ECTS կրեդիտներն այստեղ դիտարկվում են ոչ միայն որպես ուսանողների շարժունությունն ապահովող, այլ նաև կրթական ծրագրերի կառուցման կարևոր միջոց, որի

<sup>5</sup> Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված («Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի հետ համատեղ) որակի ապահովման պատասխանատուների և պրոֆեսորադասախոսական կազմի թվով 400 ներկայացուցիչների վերապատրաստման նյութեր

օգնությամբ ծրագրում կարելի է նախատեսել ուսանողի իրատեսական բեռնվածություն, որը կնպաստի ակնկալվող կոմպետենցիաների ձեռքբերմանը:

Ծրագրում կրթական վերջնարդյունքների և կոմպետենցիաների կիրառումը ենթադրում է մոտեցումների փոփոխություն նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներում: Այդ առումով «Թյունինգ» նախագիծը ամփոփել է Եվրոպական համալսարաններում առկա լավագույն փորձը:

Վերջապես, «Թյունինգ» նախագծի կարևորագույն նպատակակետերից է որակյալ գործընթացի ապահովումը կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի նախագծման, իրականացման և վերանայման փուլերում: Արդյունքում մշակվել է մի մոտեցում, որն ընդգրկում է ուսումնական շղթայի բոլոր օղակները, ներկայացվել են նաև Եվրոպական լավագույն փորձի օրինակներ, որոնք կարող են բուհերին օժանդակել կրթական ծրագրերի որակը բարելավելու գործում:

«Թյունինգ» նախագծի նպատակն էր խթանել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրվող երկրների կրթական կառույցների և ծրագրերի համադրելիությունը, համատեղելիությունն ու թափանցիկությունը: Նախագիծն ամենևին չէր ձգտում ծրագրերի միատեսակության կամ միասնական ուսումնական պլանների ձևավորման. նպատակն ընդամենը կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների ձեռքբերումն էր: Դա բխում էր թե՛ «Թյունինգի» և թե՛ Բոլոնիայի գործընթացի գլխավոր գաղափարախոսական հիմնադրույթներից մեկից՝ պաշտպանել Եվրոպայի կրթական բազմաձևությունը:

**«Թյունինգ» նախագծի սկզբունքն է կրթական կառույցների և ծրագրերի կարգաբերումը բազմազանության և ինքնավարության հիման վրա:**

Նախագծի շրջանակներում դիտարկվել են հետևյալ հինգ հիմնական ուղղությունները՝



1. կրթական վերջնարդյունքները և կոմպետենցիաների կառուցվածքն ու ցանկը բակալավրի և մագիստրոսի կրթական մակարդակների համար.

2. կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի նախագծման/մշակման մեթոդաբանությունը.

3. կրթական ծրագրերի և դրանց միավորների՝ ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունների որոշման մեթոդաբանության մշակումը.

4. դասավանդման, ուսումնառության և գնահատման համարժեք մոտեցումների ընտրությունը.

5. կրթական ծրագրերի որակի շարունակական բարձրացման մոտեցումների և մեխանիզմների մշակումը:

Նշված հինգ ուղղություններն ընդհանուր առմամբ կազմում են միասնական մի համակարգ և թույլ են տալիս համալսարաններին «կարգաբերել» իրենց կրթական ծրագրերը՝ միաժամանակ պահպանելով թե՛ սեփական ինքնավարությունը, թե՛ նորարարական (ինովացիոն) գործունեություն ծավալելու հնարավորությունները:

Բարձրագույն կրթության անցումը բազմամակարդակ համակարգի՝ բակալավրիատ, մագիստրատուրա և դոկտորանտուրա շրջափուլերով, անհրաժեշտություն է առաջացնում վերանայելու այն կրթական ծրագրերը, որոնց ձևավորման սկզբունքները գալիս են դեռ նախորդ՝ շրջափուլերի չտրոհված կրթական համակարգից: Այդօրինակ վերանայումը, ըստ էության, նշանակում է այդ ծրագրերի լիակատար վերափոխում, քանի որ նոր համակարգում յուրաքանչյուր շրջափուլ ինքնուրույն միավոր է, որի ավարտին շրջանավարտը կարող է կամ փոխադրվել հաջորդ շրջափուլ, կամ ելք ունենալ դեպի աշխատաշուկա:

Այսպիսով, նախագծի գաղափարախոսության հիմքում ընկած են մի քանի առանցքային դրույթներ, որոնցից գլխավորը կրթական վերջնարդյունքների արժևորումն է: Մյուս կարևոր հանգամանքը նոր դիտանկյունն է ECTS կրեդիտային համակարգի նկատմամբ, որն այս դեպքում դիտարկվում է արդեն ոչ միայն իբրև ուսանողական շարժունությունն ապահովելու, այլ նաև որպես կրթական ծրագրեր նախագծելու և մշակելու գործիք, քանի որ, ինչպես նշվեց, կրեդիտների

շնորհումը կատարվում է ծրագրի կամ դասընթացի/մոդուլի վերջնարդյունքներին հասնելու պարագայում միայն:

Նոր մոտեցում է ձևավորված նաև կրթության որակի հավաստման խնդիրների նկատմամբ, որի հիմնական առանձնահատկությունը կրթական ծրագրերի մշակման, վերանայման և իրագործման բոլոր փուլերում որակի ապահովման գործիքների կիրառությունն է, ինչպես նաև ծրագրի որակի բարելավման համակարգի մշակումը:

«Թյունինգի» հայեցակարգը նախատեսում է նաև կրթական աստիճանների նկարագրություն՝ արտահայտված ծրագրի պրոֆիլով, ուսումնական բեռնվածությամբ, կրթական արդյունքներով և կոմպետենցիաներով:

### **ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ «ԹՅՈՒՆԻՆԳ» ՆԱԽԱԳԾՈՒՄ<sup>6</sup>**

Բովանդակության փոխարեն (ավանդական եղանակ) կրթական վերջնարդյունքների միջոցով կրթական ծրագրերի և դասընթացների/մոդուլների նկարագրությունն ունի մի շարք առավելություններ, քանի որ վերջին հաշվով կրթության նպատակը սովորողներին հասարակական ակտիվ գործունեության նախապատրաստելն է: Կրթական վերջնարդյունքները շեշտը դնում են հենց սովորողի ուսումնառության վերջնական արդյունքի վրա (որն արտահայտվում է ստացած գիտելիքով, սովորածը հասկանալու ու վերլուծելու կարողությամբ և այն գործադրելու ունակությամբ)<sup>6</sup>՝ այդ արդյունքները ձեռք բերելու համար դասախոսի կողմից կիրառվող միջոցների փոխարեն: Այլ խոսքով, ծրագրային միավորի բովանդակության (ուսումնասիրվող հարցացանկի) փոխարեն դրա նկարագրությունը կրթական վերջնարդյունքներով՝ նշանակում է անցում մուտքով

---

<sup>6</sup> Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ, 14-17 էջեր:

պայմանավորված դասախոսամետ համակարգից դեպի ելքով պայմանավորված ուսանողամետ կրթական համակարգ:

Ելնելով կրթական գործընթացի հիմնական մասնակիցների՝ դասախոսների և ուսանողների (սովորողների) միջև առկա տարբերություններից՝ «Թյունինգի» մեթոդաբանությունը տարբերում է երկու հասկացություն՝ **կրթական վերջնարդյունք և կոմպետենցիա**: Այդ սահմանազատումը կոչված է հստակ մատնանշելու դասախոսական կազմի և ուսանողների/սովորողների դերակատարությունների տարբերությունը կրթական գործընթացում: Ուսուցման գործընթացի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են դասախոսների կողմից թե՛ ամբողջական կրթական ծրագրի, թե՛ առանձին դասընթացի կամ ուսումնական մոդուլի մակարդակում, մինչդեռ կոմպետենցիաները ձեռք են բերվում և ձևավորվում ուսումնառության ընթացքում սովորողների կողմից: Սովորողի կողմից ձեռք բերված կոմպետենցիաների փաստական մակարդակը կարող է լինել ավելի ցածր կամ բարձր, քան ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Ձեռք բերված կոմպետենցիաների մակարդակն արտահայտվում է գնահատականով կամ թվանշանով: Բացի այդ, կոմպետենցիաներն ամբողջապես կապված չեն մեկ որոշակի դասընթացի հետ, այլ ձևավորվում են կրթական ծրագրի ուսուցման ողջ ընթացքում: Գործնականում տարբերակում են կրթական վերջնարդյունքների ներկայացման երկու տարատեսակ՝ այսպես կոչված շեմային վերջնարդյունքներ, որոնք որոշում են անցողիկ մակարդակը, և ցանկալի, որոնք ցույց են տալիս, թե ձեռքբերվելիք կոմպետենցիաների ինչ մակարդակ է ակնկալում դասախոսը միջին ուսանողից:

Այսպիսով՝

– **կրթական վերջնարդյունքներն** ակնկալվող այնպիսի ցուցիչներ են, որոնք նկարագրում են, թե ուսումնառության շրջանի ավարտին ինչ պետք է գիտենա/իմանա, հասկանա և/կամ ի վիճակի լինի կատարելու սովորողը: Դրանք կարող են վերաբերել ինչպես առանձին դասընթացին, մոդուլին կամ ուսումնառության որոշակի շրջանին, այնպես էլ ամբողջական ծրագրին:

– **Կոմպետենցիան** գիտելիքի, ըմբռնման, կարողությունների և ունակությունների դինամիկ համակցություն է, որը կրթական ծրագրի հիմնական նպատակն է:

«Թյունինգ» նախագիծը կոմպետենցիաները ստորաբաժանում է երկու խմբի՝ ընդհանրական և բուն մասնագիտական՝ տարբերելով ընդհանրական կոմպետենցիաների երեք տեսակ՝ **գործիքային, միջանձնային և համակարգային:**

**Գործիքային կոմպետենցիաներն** ընդգրկում են մտածական (կոգնիտիվ) գաղափարներ և նկատառումներ հասկանալու և օգտագործելու, շրջակա միջավայրը հասկանալու և կառավարելու ունակությունները, ժամանակը կազմակերպելու, սովորելու, որոշումներ կայացնելու և խնդիրներ լուծելու կարողությունները, տեխնոլոգիական ու համակարգչային հմտությունները, տեղեկատվության կառավարման, լեզվական և հաղորդակցական կոմպետենցիաները և այլն:

**Միջանձնային կոմպետենցիաների** շարքին են դասվում այն անհատական ունակությունները, որոնք առնչվում են զգացումներն ու հարաբերություններն արտահայտելու կարողությանը, քննադատական իմաստավորման և ինքնաքննադատական հատկություններին, ինչպես նաև սոցիալական այն կարողությունները, որոնք շաղկապված են հանրային փոխգործակցության և համագործակցության հետ, մասնավորապես, խմբային աշխատանքի և սոցիալական ու բարոյական պարտավորություններ ստանձնելու կարողությունները:

**Համակարգային կոմպետենցիաները** հանդիսանում են գիտելիքի և իմացության մի համակցություն, որը թույլ է տալիս ընկալել, թե ինչպես են ընդհանուրի մասերը հարաբերվում միմյանց հետ, և գնահատել յուրաքանչյուր բաղադրիչի տեղը համակարգում, ինչպես նաև ներառում է համակարգը կատարելագործելու նպատակով փոփոխություններ պլանավորելու և նոր համակարգեր կառուցելու ունակությունները:

Նկարագրված կոմպետենցիաները կոչված են ծառայելու իբրև կողմնորոշիչներ՝ կրթական ծրագրերի մշակման և գնահատման համար, սակայն որևէ կերպ չեն սահմանափակում ծրագիրը մշակողների գործողությունները:

«Թյունինգ» նախագծում կոմպետենցիա հասկացությունը ներառում է թե՛ բուն գիտելիքն ու իմացությունը (ակադեմիական այս կամ այն ոլորտի տեսական գիտելիքը), թե՛ այն մասնագիտական գործունեության մեջ և կյանքում կիրառելու կարողությունը: Դրանով իսկ կոմպետենցիան գիտելիքին, մասնագիտական և սոցիալական հարաբերություններում գիտելիքի կիրառմանը վերաբերող բնութագրերի համակցություն է, որը նկարագրում է անձի կողմից դրա կիրառման ունակության մակարդակը կամ աստիճանը: Այդ իմաստով տիրապետել որևէ կոմպետենցիայի նշանակում է, որ անձը որոշակի խնդիր կատարում է այնպես, որ հնարավոր է գնահատել վերջինիս կատարման մակարդակը: Սա էլ իր հերթին նշանակում է, որ կոմպետենցիայի առկայության կամ բացակայության մասին չի կարելի խոսել բացարձակ գնահատականներով. մարդիկ տիրապետում են կոմպետենցիաների տարբեր աստիճանների, ուստի դրանք կարելի է դասակարգել ըստ որոշակի սանդղակի և զարգացնել տեսական ու գործնական ուսուցման միջոցով:

«Թյունինգ» նախագիծը, ինչպես նշվեց, տարբերում է կոմպետենցիաների երկու հավաքակազմ՝ բուն մասնագիտական, որոնք հանգուցային են տվյալ ակադեմիական որակավորման համար և սերտորեն առնչվում են առարկայական ասպարեզի հատուկ իմացությանը, և ընդհանրական, որոնք ընդհանուր են բոլոր ակադեմիական որակավորումների համար: Բանն այն է, որ որոշակի բնութագրեր, ինչպես, օրինակ, սովորելու ունակությունը, վերլուծելու և սինթեզելու կարողությունը և այլն, ընդհանուր են բոլոր կամ գրեթե բոլոր ակադեմիական որակավորումների համար: Հարափոփոխ հասարակության պայմաններում, որտեղ հանրային պահանջմունքները մշտապես նորովի են դրսևորվում, այդ ընդհանրական կոմպետենցիաները կարևոր նշանակություն են ձեռք բերում, քանի որ հենց դրանք են այս կամ այն կրթական ծրագրի շրջանավարտների համար ապահովում կարիերայի և աշխատանքի անցնելու ավելի լայն հնարավորություններ:

Կրթական վերջնարդյունքների սահմանումը կոմպետենցիաների տերմիններով, այսինքն՝ ուսանողի կողմից ձեռք բերվող կոմպետենցիան նկարագրելու միջոցով, դասախոսական կազմի պարտականությունն է:

Միայն տվյալ բնագավառի մասնագետները կարող են ձևակերպել կիրառելի կրթական վերջնարդյունքներ, չնայած կարևոր է նաև խորհրդակցություններ անցկացնել արտաքին շահակիցների հետ:

Բարձրագույն կրթության ոլորտի միջազգայնացման միտումը, բուհերի և կրթական ծրագրերի միջազգային մրցակցությունը անհրաժեշտություն են առաջացնում, որ յուրաքանչյուր մասնագիտության կամ առարկայական ասպարեզի համար առավել ընդհանուր կրթական վերջնարդյունքները ձևակերպվեն վերազգային մակարդակում:

## **ԹՅՈՒՆԻՆԳՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ<sup>7</sup>**

### ***Գործիքային կոմպետենցիաներ***

1. Վերլուծելու և սինթեզելու կարողություն
2. Կազմակերպելու և պլանավորելու կարողություն
3. Հիմնական ընդհանուր գիտելիքներ
4. Հիմնական մասնագիտական գիտելիքներ
5. Մայրենի լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հմտություններ
6. Օտար լեզվի իմացություն
7. Համակարգչով աշխատելու հմտություններ
8. Տեղեկատվության կառավարման (տարբեր աղբյուրներից տեղեկատվության գտնելու և վերլուծելու) կարողություն
9. Խնդիրների լուծման կարողություն
10. Որոշումների ընդունման կարողություն

### ***Միջանձնային կոմպետենցիաներ***

1. Քննադատվելու և քննադատելու ունակություն

---

<sup>7</sup> Настройка образовательных структур в Европе. Вклад университетов в Болонский процесс, стр. 9-10  
[http://www.hse.ru/data/2010/12/10/1218620004/Introduction\\_Tuning%20Educational%20Structures.pdf](http://www.hse.ru/data/2010/12/10/1218620004/Introduction_Tuning%20Educational%20Structures.pdf)

2. Թիմային աշխատանքի կարողություն
3. Միջանձնային հարաբերությունների կարողություն
4. Միջառարկայական թիմում աշխատելու կարողություն
5. Այլ ոլորտի մասնագետների հետ շփվելու կարողություն
6. Բազմաձևության բազմամշակութայնության ընդունում
7. Միջազգային միջավայրում աշխատելու կարողություն
8. Կողմնակցություն/համախոհություն էթիկայի արժեքներին

### **Համակարգային կոմպետենցիաներ**

1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն
2. Հետազոտություններ կատարելու ունակություն
3. Սովորելու կարողություն
4. Նոր իրադարձություններին հարմարվելու կարողություն
5. Նոր գաղափարներ առաջ քաշելու կարողություն
6. Լիդերություն
7. Այլ երկրների մշակույթի և սովորույթների իմացություն
8. Ինքնուրույն աշխատելու կարողություն
9. Նախագծերի մշակման և կառավարման կարողություն
10. Նախաձեռնողականություն և գործարարություն
11. Որակի մասին հոգաձություն
12. Հաջողության ձգտում

Ծրագրի առաջին և երկրորդ շրջափուլերի համար նախատեսված կրթական վերջնարդյունքները պետք է հստակորեն տարանջատվեն:

Թյունինգյան նախագծի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջին և երկրորդ շրջափուլերի կրթական ծրագրերի համար առանձնացվել են նաև տարբեր առարկայական ոլորտների համար ընդհանուր և փոխանցելի հետևյալ կոմպետենցիաները.

Առաջին շրջափուլի (**բակալավրի ծրագիր**) համար՝

– մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն դրսևորելու,

- յուրացված գիտելիքը տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու,

- նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում ընկալելու և մեկնաբանելու,

- մասնագիտության ընդհանուր կառուցվածքի և մասնագիտացումների միջև կապի ըմբռնում/իմացություն ցուցաբերելու,

- քննադատական վերլուծության և տեսությունների զարգացման մեթոդները հասկանալու և օգտագործելու,

- առարկայի մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու,

- տվյալ առարկայական ոլորտում հետազոտությունների արդյունքները գնահատելու,

- գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները հասկանալու:

Առաջին շրջափուլի ավարտը հանդիսանում է երկրորդ շրջափուլի մուտքային պահանջ: Այստեղ շրջանավարտները պետք է ունակ լինեն կատարելու նաև ինքնուրույն հետազոտություններ:

Երկրորդ շրջափուլի (**մագիստրոսի ծրագիր**) շրջանավարտները պետք է՝

- հմտորեն տիրապետեն առարկայական ոլորտին, այսինքն՝ իմանան հետազոտության նորագույն մեթոդները և տեխնոլոգիաները, գիտնան նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները,

- քննադատորեն հետևեն և իմաստավորեն տվյալ ոլորտում տեսության և պրակտիկայի զարգացումը,

- տիրապետեն անկախ հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

- ունակ լինեն ուրույն ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում (օրինակ՝ ատենախոսական աշխատանքի շրջանակներում),

- ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում,

- հմտորեն տիրապետեն տվյալ մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:



## **Կրթական ծրագրերի վերակառուցումը թյունինգյան մեթոդաբանության կիրառմամբ՝ ըստ կրթական վերջնարդյունքների**

Կրթության որակը պայմանավորված է ռեսուրսներով և բարձրագույն ուսումնական հաստատությունում իրականացվող գործընթացներով:

Ռեսուրսները ներառում են կրթական ծրագրերը, գիտական, կադրային պոտենցիալը, ինչպես նաև նյութական և մեթոդական ապահովվածությունը:

Գործընթացները պայմանավորված են կրթական ծրագրի իրականացման կազմակերպչական ապահովվածությամբ:

### **«Թյունինգի» մեթոդաբանության կիրառման անհրաժեշտությունը՝**

- փոփոխվող հասարակական պահանջմունքը (աշխատաշուկայում տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և կարողություններ ունեցող մասնագետների պահանջարկով),
- կրթական ծրագիրը համեմատելի, համադրելի, թափանցիկ դարձնելու հնարավորությունը

### **«Թյունինգի» կրթական կողմնորոշիչներ՝**

- կրթական վերջնարդյունքներ
- կոմպետենցիաներ

**• «Թյունինգ» նախագծի մեթոդաբանություն. կրթական ծրագրերի կառուցման ալգորիթմ**



**Գծանկար 1. Կրթական ծրագրերի կառուցման ալգորիթմ**

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ  
ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ՆԵՐԴԻՐ 1.**

**Պետական կրթական չափորոշիչ՝** նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

**Կրթական ծրագիր՝** կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված*

Կրթական ծրագրերի մշակումն իրականացվում է հետևյալ քայլերով.

1) Ծրագրի պահանջարկվածության և իրականացման հնարավորության հիմնավորում.

– ծրագրի սոցիալական պահանջարկի բացահայտում՝ հիմնական արտաքին շահակիցների հետ խորհրդատվական գործընթացների միջոցով,

– ծրագրի դերի և նշանակության հիմնավորում տվյալ մասնագիտական ասպարեզում,

– իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայության հիմնավորում (դասախոսական և ուսումնասօժանդակ կազմեր, ենթակառուցվածքներ, տեղեկատվական ռեսուրսներ և այլն):

2) Ծրագրի պրոֆիլի (մասնագիտական ուղղվածության) նկարագրություն (նպատակը, խնդիրները):

3) Ծրագրի կրթական վերջնարդյունքների լրակազմի սահմանում ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների տեսքով՝ ըստ ձևակերպված նպատակի և խնդիրների:

4) Ծրագրի բովանդակության, կառուցվածքի (մոդուլներ, դասընթացներ) որոշումն ու կրեդիտների բաշխումն ըստ սահմանված կրթական վերջնարդյունքների, ուսումնական պլանի մշակում:


5) Կրթական վերջնարդյունքների սահմանում առանձին դասընթացների/մոդուլների մակարդակով՝ ելնելով ծրագրի վերջնարդյունքներից:

6) Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրություն՝ ակնկալվող կրթական վերջնարդյունքներին համահունչ:

7) Ծրագրի իրականացման որակի գնահատման և շարունակական բարելավման միջոցառումների մշակում<sup>8</sup>:

Աղյուսակ 2.

**Կրթական ծրագրի օրինակ՝ «Կրթության կառավարում»<sup>9</sup>**

<ul style="list-style-type: none"> <li>▪ ՄԿԾ-ի անվանում՝             <ul style="list-style-type: none"> <li>▪ <b>«Կրթության կառավարում»</b></li> </ul> </li> <li>▪ Շնորհվող որակավորում՝             <ul style="list-style-type: none"> <li>▪ <b>կրթության կառավարման մագիստրոս</b></li> </ul> </li> <li>▪ Ուսումնառության արդյունքներ՝             <ul style="list-style-type: none"> <li>▪ <b>տեսական և կիրառական գիտելիք և հմտություն</b></li> </ul> </li> <li>▪ Դասավանդման և ուսումնառության մոտեցումներ՝ <b>ուսանողակենտրոն</b></li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Հանձնարարություններ</li> <li>▪ Գնահատման մեթոդներ</li> <li>▪ Ռեսուրսներ</li> <li>▪ Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումներ</li> </ul> <div style="text-align: center; margin: 10px 0;">  </div> <p style="text-align: center;"><b>Ըստ ուսումնառության վերջնարդյունքների</b></p>
--	---

<sup>8</sup> Աղգաշյան Ռ.Վ., Արզումանյան Կ.Ս., Բալաբանյան Հ.Ա., Մամյան Ս.Զ., Սարգսյան Յու.Լ., «Ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա կրթական ծրագրերի մշակման և վերակառուցման համար մեթոդական ուղեցույց», Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ), Երևան-2011, 38 էջ, 5-20 էջեր:

<sup>9</sup> Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված («Հ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի հետ համատեղ) որակի ապահովման պատասխանատուների և պրոֆեսորադասախոսական կազմի թվով 400 ներկայացուցիչների վերապատրաստման նյութեր:

**Նոր կրթական ծրագրի պահանջարկվածության և իրականացման հնարավորության հիմնավորում**

**Կրթական ծրագրի պահանջարկվածությունը** որոշելու համար անհրաժեշտ է՝

✓ վերլուծել աշխատաշուկայի պահանջարկը՝ պոտենցիալ գործատուների, մասնագետների, շահագրգիռ պաշտոնատար անձանց, հարակից ծրագրերի շրջանավարտների հարցումների և կարծիքների գնահատման միջոցով,

✓ հիմնավորել ծրագրի ներմուծման հրատապությունը՝ տվյալ ոլորտում մասնագետների տեղային (տարածաշրջանային) կամ ազգային պահանջարկի առումով (կառավարության որոշումներ, կազմակերպությունների հայտեր՝ մասնագետների նպատակային ուսուցման համար),

✓ ցույց տալ ծրագրի տեղը Ակադեմիայի կրթական ծրագրերի շարքում, ինչպես նաև տվյալ ամբիոնում առաջարկվող մասնագիտության/ծրագրի իրականացման նպատակահարմարությունը:

Նշված գործընթացում անհրաժեշտ է ներգրավել ինչպես ծրագրին մասնագիտորեն առնչվող բուհի դասախոսներին, այնպես էլ տվյալ ոլորտի առաջատար մասնագետներին ու կազմակերպություններին, պոտենցիալ գործատուներին, շահագրգիռ պաշտոնատար անձանց, հարակից ծրագրերի շրջանավարտներին՝ հարցումներ կազմակերպելով նրանց շրջանում: Հարցաթերթում անհրաժեշտ է ներառել հարցեր, որոնք պարզաբանում են նշված ոլորտում մասնագետների անհրաժեշտությունը, աշխատատեղերի առկայությունը (ներկա և սպասվող), այլ բուհերում նման մասնագիտությունների առկայությունը, դրանց նկատմամբ առաջարկվող ծրագրի մրցակցային առավելություններն ու տարբերությունները, ընդունելության ակնկալվող ծավալը առաջին և հաջորդ տարիներին և այլն:

Կրթական ծրագրի հաջող իրականացման համար կարևոր նախապայման է նաև անհրաժեշտ **ռեսուրսների առկայությունը**՝ կադրային, տարածքային-տեխնիկական, մեթոդական-տեղեկատվական:

**Կադրային ապահովվածության պահանջները.**

առաջարկվող ծրագրի իրականացման համար անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական անձնակազմի առկայությունը ամբիոնում/բուհում.

պահանջվող ուսումնասովանողական կազմի առկայությունը.

դասախոսների վերապատրաստման կարիքները (նոր դասընթացների, ուսուցման նոր տեխնոլոգիաների, նոր սարքավորումների և տեխնիկական միջոցների յուրացման համար) և հնարավորությունները:

**Տարածքային-տեխնիկական և ուսումնական պրակտիկայի հնարավորության ապահովվածության պահանջները.**

ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական տարածքների, լաբորատորիաների առկայությունը և/կամ դրանց հատկացման հնարավորությունը մինչև ծրագրի սկսելը.

ծրագրի իրականացման համար անհրաժեշտ առկա համակարգչային բազան և տեխնիկական միջոցները, տեխնոլոգիական ապահովվածությամբ լսարանները.

տվյալ մասնագիտության գծով պրակտիկաների անցկացման հնարավորությունը:

**Մեթոդական-տեղեկատվական ապահովվածության պահանջները.**

հայերեն և օտար լեզուներով ուսումնամեթոդական գրականության առկայությունը բուհում.

առկա էլեկտրոնային ուսումնամեթոդական ռեսուրսները.

նոր գրականության, ուսումնամեթոդական և տեղեկատվական նյութերի մշակման կարիքները:

**Որակավորման պրոֆիլի նկարագրություն**

Ցուրաքանչյուր կրթական ծրագիր պետք է պարունակի որակավորման պրոֆիլի նկարագրություն, որը սահմանում է ծրագրի նպատակը և խնդիրները, ներկայացնում շրջանավարտների ապագա մասնագիտական գործունեության ասպարեզը: Որակավորման պրոֆիլի ձևակերպման ժամանակ պետք է հաշվի առնել պետական կրթական չափորոշիչները տվյալ մասնագիտության համար: Մասնագիտական գործունեության

ասպարեզը նկարագրելիս պետք է օգտագործել գործատուների, շրջանավարտների շրջանում անցկացված հարցումների արդյունքները:

**Կրթական ծրագրի վերջնարդյունքների լրակազմի սահմանումը՝ ըստ ձևակերպված նպատակների և խնդիրների**

Կրթական ծրագրերի մշակման թյունինգյան մեթոդաբանությունը տարբերում է երկու ելակետային հասկացություն՝ կրթական վերջնարդյունքներ և կոմպետենցիաներ:

Կրթական վերջնարդյունքները ձևակերպում են, թե ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել (գործնականում ցուցաբերել) սովորողը տվյալ ծրագրային միավորի (դասընթացի/մոդուլի) կամ ողջ ծրագրի ուսուցման ավարտին: Ակնկալվող վերջնարդյունքները ձևակերպվում են ծրագիրը դասավանդող դասախոսական կազմի կողմից՝ հաշվի առնելով ծրագրի արտաքին և ներքին շահակիցների կարծիքները: Դրանք սահմանում են տվյալ միավորից կրեդիտ ստանալու համար անհրաժեշտ պահանջները:

Սովորողների կողմից կոմպետենցիաները ձեռք են բերվում անմիջականորեն ուսումնառության ընթացքում և գիտելիքի, հմտությունների ու կարողությունների դինամիկ համակցություն են, որոնց ձեռքբերումն էլ ծրագրի հիմնական թիրախն է: Կոմպետենցիաները ձևավորվում են տարբեր ծրագրային միավորների միջոցով և գնահատվում են ծրագրի տարբեր փուլերում: Ծրագրի կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են շրջանավարտներից պահանջվող կոմպետենցիաների կազմի սահմանումից հետո: Վերջինս հիմք է ծրագրի վերջնարդյունքների ձևակերպման համար:

Ծրագրի վերջնարդյունքների ձևակերպումները կարող են տարբերվել ելակետային կոմպետենցիաների ձևակերպումներից: Առանձնացվում են կոմպետենցիաների 2 հիմնական խմբեր՝

– **ընդհանրական կոմպետենցիաներ**, որոնք ընդհանուր են որակավորումների որոշակի խմբի ցանկացած մասնագիտության համար:

– **մասնագիտական կոմպետենցիաներ**, որոնք բնորոշ են տվյալ մասնագիտությանը և ձեռք են բերվում տվյալ մասնագիտության գծով դասավանդվող դասընթացների/առարկաների միջոցով:

**Ընդհանրական կոմպետենցիաների** կազմի որոշման համար կարող են հիմք ծառայել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը, հարատև ուսումնառության որակավորումների Եվրոպական շրջանակը, ԵԲԿՏ որակավորումների շրջանակը: Սույն ցուցումներում բերված է թյունինգյան նախագծով երաշխավորվող 30 ընդհանրական կոմպետենցիաների ցանկը: Նկարագրված կոմպետենցիաները ծառայում են որպես **կողմնորոշիչներ** կրթական ծրագրերի մշակման և գնահատման համար, սակայն չեն սահմանափակում ծրագիրը մշակողների այլընտրանքային առաջարկությունները:

**Մասնագիտական կոմպետենցիաները** որոշվում են՝ ելնելով տվյալ մասնագիտության որակավորման պրոֆիլից և բաղկացած են ընդհանուր կառավարման և բուն մասնագիտական կոմպետենցիաներից:

#### **Ծրագրի բովանդակության և կառուցվածքի որոշում**

Կրթական ծրագրի բովանդակությունը սահմանում է, թե ինչ պետք է յուրացնի սովորողը, որպեսզի պատրաստ լինի ապագա մասնագիտական գործունեությանը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունի կրթական ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան), որը ծրագրի նպատակների, ակնկալվող կրթական վերջնարդյունքների և այլ հիմնական բնութագրերի ամփոփ նկարագրությունն է: Այն պետք է մանրամասնի ակնկալվող վերջնարդյունքները՝ արտահայտված գիտելիքով, հմտություններով ու կարողություններով: Մասնագրում պետք է տրվեն նաև դասավանդման և ուսումնառության մեթոդները, որոնք հնարավոր են դարձնելու վերջնարդյունքների ձեռքբերումը, ինչպես նաև գնահատման մեթոդները, որոնք սովորողներին այդ վերջնարդյունքները ցուցաբերելու հնարավորություն են տալու:

Բովանդակային առումով կրթական ծրագիրը բաժանվում է 3 հիմնական կառուցամասերի (բլոկների)՝ ընդհանուր կրթություն, մասնագիտական



կրթության պարտադիր ուսուցում և մասնագիտական կրթության կամընտրական (էլեկտիվ) ուսուցում:

1) **Ընդհանուր կրթության կառուցամասը** բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

– **հիմնարար՝** բաղկացած շրջանավարտի հումանիտար, ընդհանուր մշակութային, սոցիալ-անձնային և հաղորդակցման կարողությունները ձևավորող դասընթացներից,

– **կազմակերպակառավարչական՝** բաղկացած շրջանավարտի համակարգային, կազմակերպչական, կառավարչական և տնտեսագիտական ունակությունները ձևավորող դասընթացներից,

– **համակարգային և տրամաբանական՝** բաղկացած շրջանավարտի՝ խնդիրների ձևակերպման, լուծման և տարբեր մեթոդների կիրառման ունակությունները, համակարգչային հմտությունները ձևավորող դասընթացներից և այլն:

2) **Մասնագիտական կրթության պարտադիր ուսուցման կառուցամասը** ներառում է երկու բաղադրիչ.

– **ընդհանուր մասնագիտական՝** բաղկացած շրջանավարտի ընդհանուր մասնագիտական ուղղվածության կարողությունները ձևավորող կամ հարակից մասնագիտական ոլորտներ գիտելիքների փոխանցումն ապահովող դասընթացներից,

– **հիմնական մասնագիտական՝** բաղկացած հիմնական կրթական ծրագրի միջուկը կազմող և շրջանավարտի բուն մասնագիտական ուղղվածության կարողությունները ձևավորող դասընթացներից:

3) **Մասնագիտական կրթության կամընտրական ուսուցման կառուցամասը** ներառում է ընտրովի (էլեկտիվ) դասընթացներ, որոնք ձևավորում են շրջանավարտի կողմից ընտրված մասնագիտացման համար առանձնահատուկ կարողությունները:

Ըստ կրթական վերջնարդյունքների՝ անհրաժեշտ է ձևավորել ծրագրի կառուցվածքը (ուսումնական պլանը), որտեղ ներառվում են ուսումնական

մոդուլները (ներառյալ պրակտիկաները և ամփոփիչ ատեստավորման ձևերը), կրեդիտները և գիտելիքների ստուգման ձևերը:

Ուսումնական բեռնվածության հաշվարկման համար առաջարկվում է քայլերի հետևյալ հաջորդականությունը.

1) կրթական ծրագրի բովանդակությունը կազմող դասընթացների/մոդուլների ուսումնական բաղադրիչների կազմի սահմանում.

2) յուրաքանչյուր բաղադրիչի ձևաչափի պլանավորում և դրա յուրացման համար ուսանողին անհրաժեշտ աշխատածավալի որոշում (նախահաշվարկ).

3) հաշվարկված աշխատաժամանակի/ուսումնական բեռնվածության ստուգում և անհրաժեշտության դեպքում ճշգրտում՝ ուսանողների շրջանում կատարված հարցումների օգնությամբ.

4) բոլոր մոդուլների ճշգրտված աշխատածավալների արտահայտում կրեդիտներով, դրանց հանրագումարի համեմատում տվյալ մակարդակի կրթական ծրագրի համար սահմանված ընդհանուր կրեդիտային բեռնվածության հետ (240 կրեդիտ բակալավրի և 120 կրեդիտ՝ մագիստրոսի ծրագրերի համար).

5) գործընթացի ավարտ, եթե կրեդիտների ընդհանուր գումարը համապատասխանում է տվյալ մակարդակի կրթական ծրագրի համար սահմանված նորմատիվային ցուցանիշին (240 կամ 120), հակառակ դեպքում վերանայվում և ճշգրտվում են ծրագրի բաղադրիչները՝ սկսած 2-րդ քայլից:

**Կրթական վերջնարդյունքների սահմանումը առանձին դասընթացների/մոդուլների մակարդակով**

Ուսումնական դասընթացի/մոդուլի կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս անհրաժեշտ է նկարագրել, թե ինչպես պետք է դրսևորվեն ուսանողներից պահանջվող գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

**Ուսումնական դասընթացի/մոդուլի հաջող ավարտին ուսանողներից պետք է ակնկալել որոշակի կրթական վերջնարդյունքների ձեռքբերում, ընդ որում՝ անցողիկ գնահատական**

**ստանալու համար ուսանողը պետք է ցուցաբերի ուսումնական դասընթացի/մոդուլի համար սահմանված բոլոր վերջնարդյունքների դրսևորման որոշակի աստիճան:**

Ստորև տրվում են կրթական վերջնարդյունքներ ձևակերպելու մի քանի ուղենիշային ցուցումներ.

- նկատի ունենալ ուսանողի նախորդ ուսումնառությունից ստացած գիտելիքը, առկա ժամանակը և ուսումնառության կոնկրետ հնարավորությունները,

- խուսափել կրթական վերջնարդյունքների չափից ավելի ընդարձակ կամ սեղմ ձևակերպումներից,

- չգործածել «իմանալ», «հասկանալ» կամ «սովորել» բայերը, քանզի դրանք անորոշ են և կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանության,

- որոշ դեպքերում, սովորողի ստեղծագործունակությունը և ինքնուրույն մտածողությունը խթանելու նպատակով, կարելի է օգտագործել ազատ ոճով սահմանված կրթական արդյունքներ, ինչպես, օրինակ, «քննադատորեն կիրառել տեսությունը՝ առկա իրադրությունը վերլուծելու նպատակով»,

- կրթական վերջնարդյունքների թիվը պահել հեշտ կառավարելի սահմաններում (5 - 7),

- կիրառել ուսանողների համար առավել ընկալելի լեզու,

- համոզվել, որ ձևակերպված կրթական վերջնարդյունքները գնահատելի (չափելի) են:

**Վերջնարդյունքների սահմանման ժամանակ հաճախակի հանդիպող սխալներ.**

1) տվյալ կրթական մակարդակի համար չափից ընդգրկուն կամ հակառակը՝ չափից նեղ արդյունք է սահմանված,

2) վերացական բառեր ու բառակապակցություններ են օգտագործված,

3) վերջնարդյունքները չափից շատ են,

4) մեկ վերջնարդյունքի մեջ մի քանի բայ է օգտագործված,

5) սխալ կոգնիտիվ մակարդակ է ընտրված,

6) վերջնարդյունքը իրատեսական չէ,

7) վերջնարդյունքը գնահատելի, չափելի չէ:

## ՆԵՐԴԻՐ 2.

- ECTS կրեդիտային համակարգը կրթության համընդհանուր «տարադրամն» է:
- Կրթական վերջնարդյունքը կրթության համընդհանուր «լեզուն է»:
- Հստակ սահմանված կրթական վերջնարդյունքները մեծացնում են տարբեր երկրների կրթական համակարգերի համադրելիության հնարավորությունները:

### **Կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզի ձևավորում**

Դասընթացների/մոդուլների ցանկը կազմելուց հետո անհրաժեշտ է կազմել ծրագրի ուսումնական պլանի քարտեզը: Այն հնարավորություն է տալիս գնահատելու սահմանված կոմպետենցիաների և թվարկված դասընթացների համապատասխանությունը: Արդյունքում բացահայտվում են՝

– այն կոմպետենցիաները, որոնց ձեռքբերումը ծրագրում ապահովված չէ համապատասխան դասընթացներով և ուսումնական մոդուլներով, այսինքն՝ ուսանողների կողմից չեն կարող ձեռք բերվել առանց ծրագրի առկա բովանդակության փոփոխության,

– այն դասընթացները և ուսումնական մոդուլները, որոնք չեն նպաստում ծրագրի առաջադրած խնդիրների իրականացմանը և նախանշված կոմպետենցիաների ձեռքբերմանը կամ դրանց հասնելու համար բավարար հնարավորություններ չունեն:

Կրթական ծրագրի նպատակների և բովանդակության միջև փոխկապակցվածության ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է կառուցել և լրացնել համապատասխանության մատրիցը (ծրագրի ուսումնական պլանի քարտեզը), որտեղ ուղղահայաց սյունակներում դասավորված են ակնկալվող կոմպետենցիաները (ընդհանրական և մասնագիտական), որոնք պետք է ձևավորվեն բարձրագույն կրթության տվյալ աստիճանի կրթական ծրագրի շրջանակներում, իսկ հորիզոնական տողերում՝ այն դասընթաց-

ները/մոդուլները և ուսուցման գործնական ձևերը, որոնք կազմում են ծրագրի բովանդակությունը:

Աղյուսակ 3-ում պատկերված է համապատասխանության մատրիցը պայմանական կրթական ծրագրի համար:

*Աղյուսակ 3.*

**Ծրագրի արդյունքում ակնկալվող կոմպետենցիաների և բովանդակության (դասընթացների/մոդուլների) համապատասխանության մատրիցը**

Դասընթացի/ուսումնական մոդուլի անվանումը	Կ ո մ պ ե տ ե ն ց ի ա ն ե ռ									
	A	B	C	D	E	F	G	H	I	J
1.		+			+					
2.	+			+				+		
3.				+					+	
-----										
N	+		+							+

Մատրիցի համապատասխան վանդակում նշվում է «+», եթե ծրագրի ելքային կոմպետենցիաների հայտերը և դասընթացների հնարավորությունները համընկնում են:

Համապատասխանության մատրիցի լրացված վանդակները մշակվող ծրագրի ուսումնական մոդուլների իրական և պոտենցիալ բաղկացուցիչներն են, որոնք ծրագրի շրջանավարտի համար ապահովելու են ակնկալվող կոմպետենցիաների ձեռքբերումը:

Կրթական ծրագրի մշակման գործընթացն ավարտվում է, երբ պլանավորված բոլոր կոմպետենցիաների ձեռքբերման համար արդեն որոշված են համապատասխան դասընթացներ և ուսուցման գործնական ձևեր:

**Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունը**

Կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրի նախագծման և իրականացման կարևոր բաղադրիչներից է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ճիշտ ընտրությունը:

Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների արդյունավետության գնահատումը կրթական ծրագրում պետք է իրականացնել՝ ելնելով նրանից, թե որքանով են դրանք նպաստում

ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Բացի դասախոսություններից, գործնական ու սեմինար պարապմունքներից, լաբորատոր աշխատանքներից, անհրաժեշտ է իրականացնել նաև խորհրդատվություններ, հետազոտական սեմինարներ, ուսումնասիրություններ, պրակտիկաներ, ինքնուրույն և թիմային նախագծային ու հետազոտական աշխատանքներ և այլն:

Դասավանդման մեթոդիկական պետք է հիմնվի «**սովորել սովորեցնելու**» սկզբունքի վրա:

Ուսուցման արդյունավետությունն էապես կբարձրանա, եթե դասավանդման նշված տարբեր մեթոդները զուգակցվեն ժամանակակից էլեկտրոնային միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառությամբ:

Ուսանողների կողմից ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ինչպես ծրագրի գնահատման համարժեք մեթոդների ընտրությունը, այնպես էլ ուսանողների գիտելիքների գնահատման ձևերը (թեստեր, բանավոր և գրավոր քննություններ, լսարանային ցուցադրություններ, զեկույցներ, տվյալների վերլուծության արդյունքներ կամ նյութերի ամփոփումներ, էսսեներ, կուրսային աշխատանքներ, մագիստրոսական թեզերի պաշտպանություններ և այլն):

Աղյուսակ 4.

**Կրթական ծրագրի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները**

<b>Կոմպետենցիա</b>	<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդներ</b>
<b>Հաղորդակցվելու կարողություն</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Դասախոսություններ</li> <li>2. Սեմինարներ</li> <li>3. Տնային առաջադրանք</li> <li>4. Լսարանային ցուցադրությունների պատրաստում և ցուցադրում</li> </ol>
<b>Օտար լեզվի իմացություն</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գործնական պարապմունքներ /թարգմանչական և խոսակցական/</li> <li>2. Անհատական հանձնարարականներ օտարալեզու մասնագիտական գրականության օգտագործմամբ</li> </ol>

## **Ծրագրի իրականացման որակի գնահատման և շարունակական բարելավման միջոցառումների մշակում**

Կրթական ծրագրի իրականացման որակի ապահովման և կրթական ստանդարտների պահպանման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ծրագրի տարեկան մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման գործընթացներ:

Կրթական ծրագրերի **մշտադիտարկումը (մոնիթորինգը)** որակի ապահովման բուհական գործընթաց է, որով հավաստվում է ուսումնառության և դասավանդման գործընթացների կազմակերպման, ուսումնական գործընթացի ռեսուրսային ապահովման, ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համապատասխանությունը իրականացվող ծրագրի խնդիրներին:

Կրթական ծրագրի **պարբերական վերանայումը** գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրի գործող ակադեմիական ստանդարտներն ու մատուցման փաստացի որակը՝ ծրագրի իրականացման լրիվ ցիկլի արդյունքներով և որոշում ընդունել ծրագիրը շարունակելու նպատակահարմարության և բարելավման ուղղությամբ, փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ:

Հավելված 4-ում բերված է կրթական ծրագրի մշակման, իրականացման գնահատման և հետագա կատարելագործման առանցքային հարցերի թյունինգյան ցանկը, իսկ N 5 հավելվածում՝ կրթական ծրագրի գնահատման թյունինգյան ստուգիչ հարցաշարը, որոնք օգտակար գործիքներ են ինչպես ծրագրի մշակման որակի ստուգման, այնպես էլ ծրագրի իրականացման որակի ընթացիկ ու ամբողջական գնահատման և որակի բարելավման միջոցառումների մշակման համար:

### **Գործող կրթական ծրագրերի վերակառուցում**

Գործող կրթական ծրագրերի վերակառուցումն ըստ ակնկալվող կրթական վերջնարդյունքների նպատակահարմար է իրականացնել հետևյալ կերպ.

- կատարել ծրագրի շրջանավարտների՝ ըստ մասնագիտության զրադվածության ուսումնասիրություն, հարցումներ՝ ծրագրից բավարարված

լինելու վերաբերյալ, մշակել առաջարկություններ ծրագրի փոփոխման վերաբերյալ,

- իրականացնել խորհրդակցական գործընթաց՝ նվիրված գործատուների հետ (առկա և պոտենցիալ) շրջանավարտների մասնագիտական կոմպետենցիաների անհրաժեշտ կազմին՝ ծրագիրը փոփոխելու վերաբերյալ առաջարկություններ մշակելով,

- կատարել ծրագրի պահանջարկվածության, դիմորդների հոսքի, ընդունելության դինամիկայի ու միտումների գնահատում, վերլուծել պոտենցիալ պահանջարկի գնահատականը գործատուների կողմից,

- վերլուծել ծրագրի ուսանողական համակազմի առաջընթացի (հեռացում, առաջադիմություն) դինամիկան նախորդ շրջափուլում,

- կատարել առկա ծրագրի և համանման արտասահմանյան ծրագրերի համադրական վերլուծություն, մոդելային օրինակների (նախատիպերի) ընտրություն՝ վերակառուցման գործընթացում օգտագործելու համար (նպատակների, խնդիրների, ելքային արդյունքների ձևակերպումներ, բովանդակություն և կառուցվածք), բացահայտել և գնահատել ծրագրի ուժեղ և թույլ կողմերը,

- սահմանել (վերասահմանել) վերանայվող ծրագրի նպատակն ու խնդիրները՝ նախորդ քայլերում հավաքված փաստական նյութերի հիման վրա,


- ձևակերպել ծրագրի կրթական վերջնարդյունքները շրջանավարտների ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաների տեսքով՝ ըստ սահմանված նպատակների ու խնդիրների,

- վերլուծել դիտարկվող ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը ձևակերպված վերջնարդյունքներին համապատասխանության տեսանկյունից, առանձնացնել հիմնական դասընթացներն ու մոդուլները և կառուցել ծրագրի վերջնարդյունքներին (կոմպետենցիաներին) դրանց համապատասխանության մատրից, բացահայտել անհամապատասխանությունները,

- գնահատել ծրագրի առկա ռեսուրսային բազան, ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները, մշակել բարելավման առաջարկություններ,



- պլանավորել ծրագրի կառուցվածքի ու բովանդակության փոփոխման (ծրագրի վերակազմակերպման) աշխատանքը՝ ըստ ձևակերպված նպատակների և վերջնարդյունքների, կազմել հնքնավերլուծության վերջնական զեկույց:



**Գծանկար 2. Կրթական ծրագրի վերակառուցման փուլերը**

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ<sup>10</sup>

### **Դասընթացի պլանավորման հիմնակետերը**

- Դասընթացի նկարագրությունը, որը ներառում է դասընթացի նպատակներն ու խնդիրները
- Դասընթացի կառուցվածքը և տեղը տվյալ կրթական ծրագրի շրջանակներում
- Դասընթացի ընթացքում նախատեսվող ուսումնական գործողությունների տեսակները, ինչպես նաև ուսանողի և դասախոսի պատասխանատվությունների չափի սահմանումը
- Դասընթացի գնահատման և ստուգման չափանիշների պարզ, հասկանալի և հստակ սահմանումը

### **Դասընթացի ծրագրի կառուցվածքը**

- Դասընթացը վարողի մասին տվյալներ
- Ուսանողների մասին տվյալներ
- Դասընթացի նպատակը
- Դասընթացի նկարագիրը
- Կրթական վերջնարդյունքները
- Գրականության ցանկը
- Դասընթացի օրացույցը
- Դասընթացի պահանջները
- Ստուգման և գնահատման եղանակները

### **Դասընթացը վարողի մասին տվյալներ**

- Ուսանողամետ դասընթացի ծրագիրը պետք է պարունակի անհրաժեշտ տվյալներ դասընթացը վարողի մասին, որպեսզի ուսանողը դասախոսի հետ կապ հաստատելու հիմնական եղանակների և կարգի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն ունենա:

---

<sup>10</sup> <http://herearmenia.files.wordpress.com/2012/01/d5a4d5a1d5bdd5a8d5b6d5a9d5a1d681d5ab-d5b4d5b7d5a1d5afd5b4d5a1d5b6-d683d5b8d682d5acd5a5d680d5a8.ppt>

- Դասընթացի նկարագրի այս հատվածում դասախոսը կարող է համառոտ տեղեկատվություն ներկայացնել իր կրթական և հետազոտական փորձառության, ինչպես նաև մասնագիտական հետաքրքրությունների մասին:

#### **Ուսանողների մասին տվյալներ**

- Փոխադարձ շփումը և հետադարձ կապն ապահովելու համար կարելի է ուսանողամետ դասընթացի ծրագրում ներառել համապատասխան մի հատված, որը հնարավորություն կտա հավաքագրելու ուսանողների կոնտակտային տվյալներ (անհատական տվյալներ, էլ. փոստի հասցե, հեռախոսահամար և այլն): Հնարավոր եղանակներից է՝ դասընթացի բլոգի բացումը համացանցում կամ առանձին խմբի ստեղծումը սոցիալական ցանցում:

#### **Դասընթացի նպատակը**

- Ուսանողամետ դասընթացի ծրագրի այս հատվածում հարկավոր է բացատրել, թե ինչով է պայմանավորված տվյալ դասընթացի առկայությունը կրթական ծրագրում, և ինչպես է այն լրացնում ընդհանուր կրթական ծրագիրը: Հստակ ներկայացնելով դասընթացի նպատակները՝ ուսանողին կարելի է ցույց տալ դասընթացի և իր ընդհանուր մասնագիտական աճի միջև սերտ կապը, ինչն իր հերթին կարող է խթանել ուսանողների առավել ակտիվությունը դասընթացի շրջանակներում:

#### **Կրթական վերջնարդյունքները**

- Ուսանողամետ դասընթացի կառուցման հիմնական սկզբունքներից է կրթական վերջնարդյունքների հստակ ներկայացումը: Ուսանողին անհրաժեշտ է ցույց տալ այն կրթական վերջնարդյունքները, որոնց նա կհասնի դասընթացի ավարտին: Դասընթացի կրթական վերջնարդյունքները պետք է ձևակերպվեն հնարավորինս հստակ և չափելի՝ ձևակերպված լինելով ձեռքբերվելիք կոմպետենցիաների տերմիններով՝ նկարագրելով այն որոշակի գիտելիքները, ունակությունները և հմտությունները, որոնք պետք է կարողանա դրսևորել ուսանողը դասընթացի ավարտին: Այդ ձևակերպումները պետք

է դասակարգել ըստ տեսական գիտելիքների և գործնական կարողությունների (բուն մասնագիտական և ընդհանրական):

- Այդ իսկ պատճառով դասընթացի մակարդակում ի տարբերություն կրթական ամբողջ ծրագրի, հարկավոր է խուսափել ընդհանուր արտահայտություններից (*կիմանա, կհասկանա, կծանոթանա*)՝ նախապատվությունը տալով *կդրսևորի [...-ը լուծելու, ներկայացնելու և այլն] կարողություն, կցուցաբերի [...-ը վերլուծելու, համադրելու և այլն] ունակություն* ձևակերպումներին:

#### **Գրականության ցանկ**

- Ուսանողամետ սկզբունքով կազմված դասընթացի համար կարևոր նախապայման է անհրաժեշտ գրականության և լրացուցիչ աղբյուրներ որոնելու հնարավորությունների մատչելիությունը ուսանողի համար: Դասավանդողը պետք է ուսանողին ապահովի համապատասխան գրականությունը հայթայթելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ (առկայությունը գրադարանում, ամբիոնում, վաճառքում և այլուր), իսկ հնարավորության դեպքում ուսանողներին տրամադրի համապատասխան նյութերը և գրականությունը: Գրականությունն ու ընթերցանության նյութերը պետք է դասակարգված լինեն ըստ ծրագրի բովանդակության մասում նշված համապատասխան թեմաների:

#### **Դասընթացի ուսումնական քարտեզ**

- Ուսանողներին մտահոգող ամենակարևոր հարցերից է՝ իմանալ, թե երբ և ինչ է իրենցից պահանջվելու: Այս հարցերը պարզաբանելու համար ծրագրում բերվում է դասընթացների բաղադրիչների (թեմաների, սեմինարների, միջանկյալ և ավարտական քննությունների, գրավոր նյութերի հանձնման և այլն) ժամանակացույցը, որը պետք է ընդհանուր առմամբ համաձայնեցված լինի բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի հետ: Դասընթացի առաջադրանքների պլանավորումը պետք է լինի իրատեսական և հնարավորություն ընձեռի ուսանողին պատշաճ կատարել դրանք:

#### **Դասընթացի պահանջները**

- Ուսանողամետ սկզբունքով դասընթաց կազմելու ընթացքում դասընթացին վերաբերող պահանջները կարելի է տեղաբաշխել ծրագրի

տարբեր բաժիններում, օրինակ՝ խնդիրներն ու նպատակները նկարագրող բաժիններում, ինչպես նաև գնահատման սկզբունքները նկարագրող մասում: Կարելի է նաև դասընթացի պահանջները ներկայացնել առանձին ենթաբաժնով:

### **Ստուգման և գնահատման եղանակները**

- Այս բաժնում անհրաժեշտ է հանգամանորեն նկարագրել գնահատման և ստուգման մեխանիզմները և գործիքները: Գնահատման և ստուգման գործիքները պետք է լինեն չափելի և զուրկ երկակի մեկնաբանությունից, ինչպես նաև երկակի կիրառման հնարավորությունից: Գնահատման գործիքները պետք է հասկանալի լինեն ուսանողի համար: Ուսանողը պետք է իմանա, թե ինչպես է գնահատվում իր աշխատանքը, ինչ բաղադրիչներից է կազմված ավարտական միավորը, ինչպես և ինչ գործիքներով է ստուգվում յուրաքանչյուր բաղադրիչ: Այս բաժնի նկարագրությունը նույնպես անհրաժեշտ է համաձայնեցնել բուհում գործող գիտելիքների գնահատման կարգի հետ:
- Քանի որ գնահատման արդի համակարգերում սովորաբար վերջնական միավորի մաս է կազմում ուսանողի մասնակցությունն ուսումնական պարապմունքներին (որը, որպես կանոն, պատշաճ կերպով չի հստակեցվում գիտելիքների գնահատման բուհական կարգերում), ապա այդ մասնակցությանը դասախոսի կողմից ներկայացվող պահանջները պետք է մանրամասնորեն ներկայացվեն (օրինակ՝ ակտիվություն հարցերի տեսքով, մասնակցություն քննարկումներին, առաջադրանքների կատարում սահմանված ժամկետներում և այլն) և հստակ նշվի, թե ինչ սկզբունքով է կատարվելու գնահատման այդ բաղադրիչի ձևավորումը:
- Միջանկյալ կամ ընթացիկ քննությունների պարագայում անհրաժեշտ է նկարագրել ընթացակարգը, ստուգման և գնահատման մեխանիզմն ու գործիքները: Օրինակ՝ թեստի պարագայում պետք է նկարագրել նրա կառուցվածքը, տրամադրել նմուշօրինակը, ներկայացնել գնահատման չափանիշները և անցկացման ձևը: Եթե միջանկյալ կամ ընթացիկ քննությունը թեստի միջոցով չի իրականացվում, այլ կազմված է տեսական հարցերից, ապա պետք է նշել դրանց քանակը, յուրաքանչյուր հարցի արժեքը և գնահատման սկզբունքը):

- Գրավոր նյութի (էսսե, ռեֆերատ, կուրսային աշխատանք) պարագայում պետք է պարզ և հստակ նկարագրվեն բոլոր այն չափանիշները, որոնցով առաջնորդվելու է դասախոսը տվյալ նյութը ստուգելու և գնահատելու ընթացքում:

**Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒՄ<sup>11</sup>**

Հարգելի՛ շրջանավարտ, Դուք մասնակցում եք Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) մասնագիտական կրթության որակի խնդիրներին վերաբերող անանուն հարցմանը, որի արդյունքները Ակադեմիայի ղեկավարությանը հնարավորություն կտան ձեռնարկելու միջոցներ՝ ուղղված կրթության որակի հետագա բարձրացմանը: Ակնկալում ենք Ձեր ակտիվ և անկողմնակալ մասնակցությունը: Նախընտրած հարցերի Ձեր տարբերակները Դուք կարող եք նշել որևէ պայմանական նշանով (շրջանակ, գծիկ, V-նշում և այլն)՝ յուրաքանչյուր հարցում նշելով հարցի պահանջներից բխող տարբերակները:

**Բաժին 1. Շրջանավարտի անհատական տվյալները**

- 1.1. Սեռը**            1. արական                                  2. իգական
- 1.2. Տարիքը**            1. 20 – 23 տարեկան,                    2. 24 – 28 տարեկան,  
3. 29 – 35 տարեկան,                    4. 36 – 40 տարեկան,  
5. 41 – 50 տարեկան,                    6. 51 տարեկանից բարձր
- 1.3. Մասնագիտությունը**
  - 1. Հանրային կառավարում
  - 2. Իրավագիտություն
  - 3. Կառավարում (մասնագիտացումը՝ հանրային ֆինանսների կառավարում)
  - 4. Քաղաքագիտություն (մասնագիտացումը՝ քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն)
  - 5. Հոգեբանություն (մասնագիտացումը՝ կառավարման հոգեբանություն)
- 1.4. Ուսուցման ձևը**                                  1. առկա    2. հեռակա

**1.5. Աշխատանքային գործունեությունը**

<sup>11</sup> Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան շարունակաբար ձգտում է վերանայել և բարելավել դասավանդման և ուսումնառության որակը:



1. Աշխատում եմ իմ մասնագիտությամբ պետական հիմնարկում:
2. Աշխատում եմ պետական հիմնարկում, սակայն ոչ իմ մասնագիտությամբ:
3. Աշխատում եմ մասնավոր կազմակերպությունում մասնագիտությանս համապատասխան:
4. Աշխատում եմ մասնավոր կազմակերպությունում մասնագիտությանս ոչ համապատասխան:
5. Զբաղվում եմ սեփական բիզնեսով:
6. Նախկինում աշխատել եմ, սակայն հիմա չեմ աշխատում:
7. Երբևէ չեմ աշխատել:

**Բաժին 2. Կրթական ծրագրերի, դասընթացների, դասավանդման և ուսումնառության որակի գնահատում**

**2.1. Ձեր կարծիքով, Ակադեմիայում ստացած մասնագիտական գիտելիքները, հմտությունները, կարողությունները համապատասխանո՞ւմ են աշխատաշուկայի պահանջներին:**

1. Համապատասխանում են ամբողջությամբ:
2. Համապատասխանում են մասամբ:
3. Գրեթե չեն համապատասխանում:
4. Չեն համապատասխանում:
5. Դժվարանում եմ պատասխանել:

**2.2. Դուք բավարարվա՞ծ եք Ձեզ դասավանդող դասախոսների մասնագիտական գիտելիքների և փորձի դրսևորմամբ:**

1. Այո՛, բավարարված եմ:
2. Ավելի շատ բավարարված եմ, քան ոչ:
3. Ավելի շատ բավարարված չեմ, քան բավարարված եմ:
4. Բավարարված չեմ:
5. Դժվարանում եմ պատասխանել:

**2.3. Խնդրում ենք գնահատել Ձեր կողմից կատարված մագիստրոսական թեզի հետևյալ բաղադրիչները՝**

**2.3.1. Ձեր մասնակցությունը մագիստրոսական թեզի թեմայի ընտրությանը.**

1. Եղել է իմ անմիջական մասնակցությամբ:
2. Ունեցել եմ որոշ մասնակցություն:
3. Մասնակցություն չեմ ունեցել:
4. Դժվարանում եմ պատասխանել:

**2.3.2. Մագիստրոսական թեզի ղեկավարի համագործակցությունը Ձեզ հետ.**

1. Մագիստրոսական թեզի ղեկավարն ունեցել է կարևոր դերակատարում իմ աշխատանքում:
2. Մագիստրոսական թեզի ղեկավարն ունեցել է որոշակի դերակատարում իմ աշխատանքում:
3. Մագիստրոսական թեզի ղեկավարն ունեցել է աննշան դերակատարում իմ աշխատանքում:
4. Մագիստրոսական թեզի ղեկավարը որևէ դերակատարում չի ունեցել իմ աշխատանքում:

**2.4. Խնդրում ենք գնահատել ամփոփիչ ատեստավորման գործընթացը:**

Հ/Հ	Գնահատման օբյեկտները	գե- րա- զանց	լավ	բա- վա- րար	ան- բա- վա- րար	դժվա- րա- նում եմ գնա- հա- տել
1.	Գիտահետազոտական պրակտիկայի օգտակարությունը մագիստրոսական թեզի պատրաստման ժամանակ					
2.	Մագիստրոսական թեզի պատրաստման ընթացքում Ակադեմիայի գրադարանային ֆոնդի պիտանիությունը					
3.	Մագիստրոսական թեզի ղեկավարի մասնագիտական համապատասխանությունը թեմային					
4.	Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպական մակարդակը					
5.	Մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացքում տրված հարցերի համապատասխանությունը թեմային և բովանդակությանը					
6.	Մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունը					
7.	Մագիստրոսական թեզի					

	գնահատման անաչառությունը					
8.	Ավարտական հարցաշարերում ուսումնական նյութի ընդգրկվածության ամբողջականության աստիճանը					
9.	Ավարտական քննությանը նախապատրաստվելու համար հատկացված օրերի քանակը					
10.	Նախաքննական խորհրդատվությունների օգտակարության աստիճանը					
11.	Ավարտական քննության սենյակում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը					
12.	Հանձնաժողովի կողմից քննության արդյունքների վերաբերյալ հիմնավորումները					
13.	Ավարտական քննության գնահատականի անաչառությունը					

**2.5. Խնդրում ենք գնահատել Ակադեմիայում սովորելու ժամանակ Ձեր կողմից ձեռք բերված հետևյալ մասնագիտական որակները:**

Հ/Հ	Մասնագիտական որակները բնորոշող տարրերի նկարագիր	գե- րա- գանց	լավ	բա- վա- րար	ան- բա- վա- րար	դժվա- րա- նում են գնա- հա- տել
1.	Մասնագիտությանն առնչվող ծրագրեր կազմելը					
2.	Մասնագիտական ծրագրեր իրականացնելը (ղեկավարելը)					
3.	Մասնագիտական աշխատանքին առնչվող ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելը					
4.	Մասնագիտական աշխատանքի ոլորտում նոր					

	հայեցակարգեր առաջարկելը					
5.	Մասնագիտական աշխատանքին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծեր մշակելը					
6.	Մասնագիտական աշխատանքին առնչվող նորմատիվ իրավական ակտերի վերլուծություն, դրանց մասին առաջարկություններ ներկայացնելը					
7.	Մասնագիտական աշխատանքի ոլորտում այլ աշխատողներին խորհրդատվություն տրամադրելը					

**2.6. Խնդրում ենք գնահատել Ակադեմիայում սովորելու ժամանակ Ձեր կողմից ձեռք բերված հետևյալ հմտությունները և կարողությունները:**

Հ/Հ	Հմտությունները, կարողությունները բնորոշող տարրերի նկարագիր	գերազանց	լավ	բավարար	անբավարար	դժվարանում եմ գնահատել
1.	Համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից օգտվելու հմտություն					
2.	Մասնագիտական օտար լեզվի հմացություն					
3.	Թիմային աշխատանքի կատարում					
4.	Բանակցությունների վարում					
5.	Հաղորդակցման հմտություններ					

**2.7. Որքանով եք գոհ Ակադեմիայում ստացած Ձեր կրթությունից:**

1. Շատ գոհ եմ:
2. Գոհ եմ:
3. Որոշ չափով գոհ եմ:
4. Այնքան էլ գոհ չեմ:

5. Ընդհանրապես գոհ չեմ:
6. Դժվարանում եմ պատասխանել:

**2.8. Եթե հնարավորություն ունենայիք ուսումը նորից սկսելու, Դուք կընտրեի՞ք նույն մասնագիտությունը և նույն կրթական հաստատությունը (Ակադեմիան):**

Հ/Հ	Չափանիշը	Մասնագիտությունը	Կրթական հաստատությունը (Ակադեմիան)
1.	Այո՛, միանշանակ նորից կընտրեի:		
2.	Հնարավոր է, որ ընտրեի:		
3.	Միանշանակ չէի ընտրի:		

**2.9. Ձեր ընկերոջը կամ հարազատ մարդուն խորհուրդ կտա՞ք սովորելու Ակադեմիայում:**

1. Այո՛, անպայման խորհուրդ կտամ:
2. Հնարավոր է, որ խորհուրդ տամ:
3. Միանշանակ խորհուրդ չեմ տա:
4. Դժվարանում եմ պատասխանել:

**2.10. Խնդրում ենք ներկայացնել Ձեր լրացուցիչ դիտարկումները 2-րդ բաժնի հարցերի առնչությամբ:**

---



---



---



---

**Բաժին 3. Շրջանավարտի ակնկալիքներն ուսումնառությունն ավարտելուց հետո**

**3.1. Ի՞նչ հեռանկար եք տեսնում Ձեր աշխատանքային կարիերայի համար, օրինակ՝ 5 տարի հետո:**

1. Կատարել մասնագիտական աշխատանք պետական համակարգում:
2. Կատարել մասնագիտական աշխատանք մասնավոր կազմակերպությունում:
3. Կատարել ոչ մասնագիտական աշխատանք պետական համակարգում:
4. Կատարել ոչ մասնագիտական աշխատանք մասնավոր կազմակերպությունում:
5. Աշխատել միջազգային կազմակերպությունում:
6. Աշխատել արտերկրում:
7. Կատարել ցանկացած բարձր վարձատրվող աշխատանք:

8. Զբաղվել սեփական բիզնեսով:

**3.2. Ուսումն ավարտելուց անմիջապես հետո կնախընտրելի՝**

1. Աշխատանքի անցնել պետական համակարգում:
2. Աշխատանքի անցնել ՀՀ ոչ պետական կազմակերպությունում:
3. Ինձ համար միևնույն է, թե որտեղ կաշխատեմ, կարևորը ՀՀ-ում աշխատելն է:
4. Աշխատանքի անցնել արտերկրում:
5. Անցնել ցանկացած հեռանկարային աշխատանքի:
6. Ես չեմ շտապում աշխատանքի անցնել, աշխատանքը չի փախչի:

**3.3. Խնդրում եմք նշել ամսական աշխատավարձի այն չափը, որն այս պահին օբյեկտիվորեն համարում եք Ակադեմիայում ստացած Ձեր գիտելիքներին, հմտություններին և կարողություններին համապատասխան:**

1. Մինչև 80 000 ՀՀ դրամ:
2. 80 000 – 100 000 ՀՀ դրամ:
3. 100 000 - 150 000 ՀՀ դրամ:
4. 150 000 - 200 000 ՀՀ դրամ:
5. 200 000 ՀՀ դրամից ավելի:

**3.4. Ձեր կարծիքով, Ակադեմիայում ստացած գիտելիքները բավարար են Ակադեմիան ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ ըստ մասնագիտության աշխատանքի անցնելու համար:**

1. Այո՛, իմ ստացած գիտելիքները լիովին բավարար են համապատասխան գործատուի մոտ աշխատանքի անցնելու համար:
2. Այո՛, գիտելիքներս կբավարարեն, սակայն որակյալ աշխատող դառնալու համար անհրաժեշտ է ձեռք բերել որոշակի աշխատանքային փորձ:
3. Համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար լրացուցիչ վերապատրաստման անհրաժեշտություն կզգացվի:
4. Դժվարանում եմ պատասխանել:

**3.5. Ձեր կարծիքով, Ակադեմիայում ստացած գիտելիքները, հմտությունները և կարողությունները որքանո՞վ կնպաստեն աշխատանքի վայրում Ձեր պաշտոնեական առաջխաղացմանը:**

1. Կնպաստեն էականորեն:
2. Կնպաստեն, սակայն պաշտոնեական առաջխաղացման համար կարևորը աշխատանքային արդյունավետ փորձ ձեռք բերելն է:
3. Որոշ չափով կնպաստեն, սակայն պաշտոնեական առաջխաղացման համար կարևորը ունեցած կապերն ու ծանոթություններն են:
4. Որևէ կերպ չեն նպաստի, քանի որ Ակադեմիայում ստացած գիտելիքներն ունեն ավելի շատ տեսական նշանակություն:

5. Որևէ կերպ չեն նպաստի, քանի որ պաշտոնեական առաջխաղացման համար պետք է ունենալ ուժեղ հովանավորներ:
6. Դժվարանում եմ պատասխանել:

**3.6. Մտադի՞ր եք Ակադեմիան ավարտելուց հետո շարունակել աշխատանքը թեկնածուական թեզի վրա:**

1. Այո՛, մտադիր եմ:
2. Մտադիր չեմ:
3. Դեռ չեմ որոշել:
4. Դժվարանում եմ պատասխանել:

**3.7. Եթե մտադիր եք (մտադիր լինեիք) ուսումն ավարտելուց հետո շարունակել աշխատանքը թեկնածուական թեզի վրա, ապա (պատասխանում են միայն նրանք, ովքեր ընտրել են 3.6-րդ հարցի 1-ին, 3-րդ և 4-րդ տարբերակները)՝**

1. Կնախընտրեի այդ աշխատանքը կատարել Ակադեմիայում:
2. Կնախընտրեի այդ աշխատանքը կատարել Ակադեմիայում, իսկ եթե դա չհաջողվի, ապա հայկական գիտակրթական այլ հաստատությունում:
3. Միանշանակ կնախընտրեի այդ աշխատանքը կատարել հայկական գիտակրթական այլ հաստատությունում:
4. Կնախընտրեի այդ աշխատանքը կատարել արտերկրում:
5. Ինձ համար մեկ է, թե որտեղ կկատարեմ այդ աշխատանքը:
6. Դժվարանում եմ պատասխանել:

**3.8. Խնդրում ենք ներկայացնել Ձեր լրացուցիչ դիտարկումները 3-րդ բաժնի հարցերի առնչությամբ:**

---



---



---



---

**Բաժին 4. Շրջանավարտի աշխատանքային գործունեության ուղղորդմանը և մասնագիտական կողմնորոշմանը նպաստող գործոնները**

**4.1. Ինչպե՞ս կգնահատեիք Ակադեմիայում գործող աշխատանքային գործունեության ուղղորդման և մասնագիտական կողմնորոշման համակարգերը:**

Հ/Հ	Համակարգը	գե- ր- զանց	լավ	բա- վա- րար	ան- բա- վա- րար	դժվա- րա- նում եմ

						<b>գնահատել</b>
1.	Աշխատանքային ուղղորդման համակարգ					
2.	Մասնագիտական կողմնորոշման համակարգ					

**4.2. Աշխատանք գտնելու հարցում դիմե՞լ եք Ակադեմիայի ղեկավարությանը:**

1. Այո՛, դիմել եմ և ստացել որոշ աջակցություն:
2. Այո՛, դիմել եմ, սակայն որևէ աջակցություն չեմ ստացել:
3. Ո՛չ, չեմ դիմել, քանի որ գիտեի՝ միևնույն է ոչ մի օգուտ չէր լինի:
4. Ո՛չ, չեմ դիմել, քանի որ գիտեի, որ դա Ակադեմիայի գործը չէ:
5. Ո՛չ, չեմ դիմել, քանի որ արդեն աշխատում եմ:
6. Չեմ դիմել, քանի որ նախընտրում եմ նման հարցերն ինքնուրույն լուծել:
7. Չեմ դիմել, քանի որ համոզված եմ, որ աշխատանքի տեղավորվելու համար կօգնեն հարազատները, բարեկամները և ծանոթները:
8. Չեմ դիմել, քանի որ մտադիր եմ բացել սեփական գործ (բիզնես):
9. Չեմ դիմել, քանի որ աշխատանքի տեղավորման համար մտադիր եմ դիմել աշխատանքի տեղավորման պետական կառույցներին:
10. Չեմ դիմել, քանի որ աշխատանքի տեղավորվելու համար մտադիր եմ դիմել աշխատանքի տեղավորման մասնավոր կազմակերպությունների:

**4.3. Եթե աշխատանքի տեղավորվելու հարցում Ակադեմիայից ստացել եք որևէ աջակցություն, ապա (պատասխանում են միայն 4.2-րդ հարցի 1-ին տարբերակին պատասխանողները)**

1. Դուք մտադիր եք օգտվել այդ աջակցությունից, քանի որ առաջարկվող աշխատանքը Ձեզ բավարարում է:
2. Դուք ստիպված եք օգտվել այդ աջակցությունից, քանի որ այլ աշխատանք գտնելու հնարավորություն առայժմ չունեք:
3. Հավանաբար չեք օգտվի այդ աջակցությունից, քանի որ առաջարկվող աշխատանքը անհետաքրքիր է:
4. Հավանաբար չեք օգտվի այդ աջակցությունից, քանի որ առաջարկվող աշխատանքը շատ ցածր է վարձատրվում:
5. Դժվարանում եմ պատասխանել:

**4.4. Խնդրում ենք ներկայացնել Ձեր լրացուցիչ դիտարկումները 4-րդ բաժնի հարցերի առնչությամբ:**

---



---



**Բաժին 5. Հետագա բարեփոխումները շրջանավարտի աչքով**

**5.1. Եթե հնարավորություն ունենայիք, ապա ի՞նչը կփոխեիք Ակադեմիայում:**

Հ/Հ	Փոփոխության անվանումը	Նշում
<b>1. Ուսումնական գործընթացները (նշել մինչև 4 տարբերակ)</b>		
1.1.	Կվերանայելի մասնագիտական առարկաների ծրագրերը՝ տալով դրանց ավելի շատ գործնական ուղղվածություն:	
1.2.	Կներդնելի կրթության խրախուսման նոր ձևեր:	
1.3.	Կավելացնելի մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկը:	
1.4.	Կնվազեցնելի/կավելացնելի (ընդգծել) Ակադեմիայի վարչական կազմի միջամտությունը ուսանողական կյանքին:	
1.5.	Կփոխելի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով (ընդգծել միայն մեկը) <ul style="list-style-type: none"> <li>- թեստային համակարգը</li> <li>- գրավոր միջանկյալ քննությունների և ստուգաթղթերի համակարգը</li> <li>- բանավոր քննությունների և ստուգաթղթերի համակարգը</li> <li>- նշված համակարգերի արդյունավետ համադրումը:</li> </ul>	
1.6.	Կբարձրացնելի սովորողներին գիտական աշխատանքներում ներգրավելու աստիճանը:	
1.7.	Առավել նպատակային կդարձնելի համագործակցությունը գործատուների հետ:	
1.8.	Առավել կսերտացնելի կապը այլ կրթական հաստատությունների հետ:	
1.9.	Այլ (նշել)	
<b>2. Ուսանողական կյանքի բաղադրիչները (նշել մինչև 3 տարբերակ)</b>		
2.1.	Կստեղծելի սովորողների ժամանցի և հանգստի համար ավելի հարմարավետ պայմաններ:	
2.2.	Կզարգացնելի Ակադեմիայում սպորտով զբաղվելու հնարավորությունները:	
2.3.	Կզարգացնելի ուսանողների ինքնավարության	

	համակարգը (ուսանողական խորհուրդ և այլն):	
2.4.	Կուժեղացների շրջանավարտներին աշխատանքի տեղավորման ուղղորդման աշխատանքները:	
2.5.	Կուժեղացների սովորողների մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:	
2.6.	Այլ (նշել)	
<b>3. Ակադեմիայի ուսումնական ռեսուրսները և այլ պայմանները (նշել մինչև 3 տարբերակ)</b>		
3.1.	Կհզորացների Ակադեմիայի համակարգչային բազան:	
3.2.	Կհզորացների Ակադեմիայի գրադարանային ֆոնդը:	
3.3.	Կնախատեսելի սովորողների համար լրացուցիչ ծառայություններ:	
3.4.	Կբարեկարգելի Ակադեմիայի տարածքը և լսարանները:	
3.5.	Կհետևելի Ակադեմիայում տիրող մաքրությանը:	
3.6.	Կխստացների/կթուլացների (ընդգծել) Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները ուսանողների համար:	
3.7.	Կխստացների/կթուլացների (ընդգծել) Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները դասախոսների համար:	
3.8.	Կուժեղացների Ակադեմիայի գովազդը, որպեսզի հանրությունը հասկանա, թե որքան լավ կրթական հաստատություն է:	
3.9.	Այլ (նշել)	

**5.2. Ասացեք, խնդրեմ, Դուք ամենից շատ ի՞նչն եք արժևորում (նշել մինչև 5 պատասխան):**

1. Հարուստ լինելը:
2. Կարիերան:
3. Իշխանությունը:
4. Վստահությունն ապագայի հանդեպ:
5. Հայրենիքին ծառայելը:
6. Սիրելի աշխատանքով զբաղվելը:
7. Շրջապատի հարգանքը:
8. Սերը ծնողների հանդեպ:
9. Արտահայտվելու և գործելու ազատությունը:
10. Ընտանիք, երեխաներ ունենալը:
11. Էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրելը:
12. Բոնության սպառնալիքը բացառող միջավայրում ապրելը:

13. Հավատքը:

14. Հանուն ճշմարտության և արդարության ապրելը:

15.Այլ

---

---

---

---

**Ն Շ ՈՒ Մ Ն Ե Ր**

---

---

---

---

---

---

---

---

**Շնորհակալություն համագործակցության համար**

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

**ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՑ  
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա) անցկացնում է փորձագիտական հարցում, որի նպատակն է վեր հանել Ակադեմիայի շրջանավարտների մասնագիտական կարողությունների, հմտությունների և գիտելիքների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին: Ակնկալում ենք Ձեր ակտիվ և անկողմնակալ մասնակցությունը անցկացվող հետազոտությանը, որի շրջանակներում կարող եք արտահայտել Ձեր կարծիքը Ակադեմիայի շրջանավարտների մասին՝ պատասխանելով հարցաթերթի համապատասխան հարցերին:  
Ձեր նախընտրած փարբերակները Դուք կարող եք նշել որևէ պայմանական նշանով (շրջանակ, գծիկ, V- նշում և այլն):

**Բաժին 1. Կազմակերպության մասին տվյալներ**

1. Կազմակերպության անվանումը \_\_\_\_\_

2. Հարցաթերթին պատասխանող անձի

պաշտոնը \_\_\_\_\_

աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում \_\_\_\_\_ տարի  
կապի միջոցները՝ հեռախոս \_\_\_\_\_  
էլեկտրոնային փոստ \_\_\_\_\_

3. Կազմակերպության կազմակերպաիրավական ձևը՝

1. Պետական 2. Ոչ պետական

4. Կազմակերպությունում աշխատողների թիվը \_\_\_\_\_ մարդ,  
որից \_\_\_\_\_ իգական սեռի, \_\_\_\_\_ արական սեռի  
ներկայացուցիչներ:

**Բաժին 2. Ակադեմիայի շրջանավարտները կազմակերպությունում**

**1. Խնդրում ենք նշել՝ Ձեր կազմակերպությունում աշխատում կամ երբևէ աշխատե՞լ են Ակադեմիայի շրջանավարտներ.**

1. Այո՛, աշխատում են:
2. Աշխատել են նախկինում:
3. Ո՛չ, չեն աշխատել և չեն աշխատում:

**2. Խնդրում ենք նշել Ձեր կազմակերպությունում ներկայումս աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում աշխատած Ակադեմիայի շրջանավարտների թիվը.**

1. Կազմակերպությունում ներկայումս աշխատում են Ակադեմիայի \_\_\_\_\_ շրջանավարտ:
2. Նախկինում աշխատել են (ներկայումս չեն աշխատում) Ակադեմիայի \_\_\_\_\_ շրջանավարտ:

**3. Խնդրում ենք նշել Կազմակերպությունում ներկայումս աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում աշխատած Ակադեմիայի շրջանավարտների թիվը՝ ըստ մասնագիտությունների.**

1. «Հանրային կառավարում» մասնագիտությամբ շրջանավարտներ \_\_\_\_\_ մարդ:
2. «Իրավագիտություն» մասնագիտությամբ շրջանավարտներ \_\_\_\_\_ մարդ:
3. «Կառավարում» մասնագիտությամբ շրջանավարտներ \_\_\_\_\_ մարդ:
4. «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ շրջանավարտներ \_\_\_\_\_ մարդ:
5. «Հոգեբանություն» մասնագիտությամբ շրջանավարտներ \_\_\_\_\_ մարդ:
6. «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում» լրիվ դասընթացն ավարտած (պետական ծառայողի որակավորմամբ) \_\_\_\_\_ մարդ:

**4. Ինչպե՞ս եք գնահատում (ընդհանրական գնահատականով) Ձեր կազմակերպությունում աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում աշխատած Ակադեմիայի շրջանավարտների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները.**

*0. Կազմակերպությունում Ակադեմիայի շրջանավարտներ չեն աշխատում, 1.Ցածր, 2.Միջինից ցածր, 3.Միջին, 4.Միջինից բարձր, 5.Բարձր:*

	0	1	2	3	4	5
<b>Գիտելիքներ</b>						
<b>Կարողություններ</b>						
<b>Հմտություններ</b>						

5. Խնդրում ենք գնահատել Ձեր կազմակերպությունում ներկայումս աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում աշխատած Ակադեմիայի շրջանավարտների կրթության որակը բնութագրող առանձին բաղադրատարրերը.

N	Չափանիշներ	Գե- րա- զանց	Լավ	Բա- վա- րար	Ան- բա- վա- րար	Դժվա- րանում են պա- տաս- խանել
1.	Համակարգչից օգտվելու շրջանավարտի կարողություններ					
2.	Օտար լեզուներին տիրապետելու կարողություն					
3.	Ինքնուրույն վերլուծություններ կատարելու կարողություն					
4.	Իրավական ակտերի նախագծեր մշակելու կարողություն					
5.	Աշխատանքի վայրում իր գործընկերների հետ շփվելու կարողություն/ հաղորդակցման հմտություններ					
6.	Աշխատանքի վայրում քաղաքացիների հետ շփվելու կարողություն					
7.	Տեղեկություններ հավաքագրելու և այն վերլուծելու կարողություն					
8.	Աշխատանքները պլանավորելու և կազմակերպելու կարողություն					
9.	Աշխատանքում ժամանակակից տեխնիկական միջոցների					

	և տեխնոլոգիաների կիրառման կարողություն					
10.	Որոշումներ կայացնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություն					
11.	Չարգացման ռազմավարական ծրագրեր առաջարկելու և մշակելու ունակություն					
12.	Թիմային աշխատանք կատարելու ունակություն					
13.	Ոչ ստանդարտ մտածելու ունակություն/ ստեղծագործական մտածողություն					
14.	Ծառայողական էթիկետ/վարվելակերպ					
15.	Սթրեսային իրավիճակներին հարմարվելու ունակություն/սթրեսակայունությունը					
16.	Այլ (նշել)					

**6. Գնահատե՛ք Ձեր կազմակերպությունում աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում աշխատած Ակադեմիայի շրջանավարտների պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունը.**

1. Ակադեմիայի շրջանավարտները, որպես կանոն, ունենում են պաշտոնեական առաջխաղացման մեծ հնարավորություն:
2. Ակադեմիայի շրջանավարտները, որպես կանոն, ունենում են պաշտոնեական առաջխաղացման համեմատաբար մեծ հնարավորություն:
3. Ակադեմիայի շրջանավարտների և մյուս աշխատողների պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունները հավասարազոր են:
4. Ակադեմիայի շրջանավարտների պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունները ցածր են մյուս աշխատողների համեմատ:
5. Դժվարանում եմ պատասխանել:

**7. Եթե կատարեք ընդհանրական գնահատում, ապա ներկայունս Ձեր կազմակերպությունում աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում**

**աշխատած Ակադեմիայի շրջանավարտները որքանով են համապատասխանում Ձեր առաջադրած պահանջներին:**

1. Լիովին համապատասխանում են:
2. Հիմնականում համապատասխանում են:
3. Համապատասխանում են մասամբ:
4. Որպես կանոն, չեն համապատասխանում:
5. Ընդհանրապես չեն համապատասխանում:
6. Դժվարանում եմ պատասխանել:

**8. Նշե՛ք այն երեք կարևոր մասնագիտական որակները, որոնք ձևավորված չեն (թերի են) Ձեր կազմակերպությունում աշխատող և նախորդ չորս տարվա ընթացքում աշխատած Ակադեմիայի շրջանավարտների մոտ.**

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_

**9. Որո՞նք պետք է լինեն Ձեր կազմակերպությունում Ակադեմիայի շրջանավարտների կողմից իրականացվող հիմնական գործառույթները՝ ըստ մասնագիտությունների:**

Մասնագիտության անվանումը		Հանրային կառավարում
<b>Շրջանավարտը պետք է կարողանա կատարել հետևյալ գործառույթները.</b>		
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		
7.		
Մասնագիտության անվանումը		Իրավագիտություն
<b>Շրջանավարտը պետք է կարողանա կատարել հետևյալ գործառույթները.</b>		
1.		
2.		
3.		
4.		



5.	
6.	
7.	
<b>Մասնագիտության անվանումը</b>	<b>Կառավարում</b> (մասնագիտացումը՝ Հանրային ֆինանսների կառավարում)
<b>Շրջանավարտը պետք է կարողանա կատարել հետևյալ գործառույթները.</b>	
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	
<b>Մասնագիտության անվանումը</b>	<b>Քաղաքագիտություն</b> (մասնագիտացումը՝ Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն)
<b>Շրջանավարտը պետք է կարողանա կատարել հետևյալ գործառույթները.</b>	
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	
<b>Մասնագիտության անվանումը</b>	<b>Հոգեբանություն</b> (մասնագիտացումը՝ Կառավարման հոգեբանություն)
<b>Շրջանավարտը պետք է կարողանա կատարել հետևյալ գործառույթները.</b>	
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	

**Բաժին 3. Ակադեմիայի և կազմակերպության համագործակցությունը**

**1. Ձեր կազմակերպությունը ներկայումս համագործակցում է (նախկինում համագործակցել է) Ակադեմիայի հետ.**

1. Այո՛, համագործակցում է:
2. Նախկինում համագործակցել է:
3. Ո՛չ, չի համագործակցել և ներկայումս էլ չի համագործակցում:

**2. Գնահատե՛ք Ակադեմիայի հետ Ձեր կազմակերպության համագործակցության հետևյալ բաղադրատարրերը.**

N	Չափանիշներ	Գե-րա-զանց	Լավ	Բա-վա-րար	Ան-բա-վա-րար	Համա-գոր-ծակ-ցու-թյուն չի եղել
1.	Համատեղ կրթական ծրագրերի իրականացում					
2.	Համատեղ վերապատրաստման դասընթացների իրականացում					
3.	Ակադեմիայի մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների պրակտիկաների կազմակերպում					
4.	Ակադեմիայի սովորողների ստաժավորում Ձեր կազմակերպությունում					
5.	Համատեղ ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում					
6.	Իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակում					
7.	Այլ (նշել)					
7.1.						
7.2.						

7.3.						
7.4.						

**Մեկնաբանություններ**

---



---



---



---

**3. Նշեք Ձեր կարծիքը 3-րդ բաժնի 2-րդ հարցում համագործակցության առարկա չհանդիսացող բաղադրատարրերի վերաբերյալ.**

N	3-րդ բաժնի 2-րդ հարցում բերված այն բաղադրատարրերի համարը, որի շրջանակներում Ակադեմիայի և Ձեր կազմակերպության միջև համագործակցություն չի եղել	Չհամագործակցելու պատճառներ*						
		1	2	3	4	5	6	7
1.								
2.								
3.								
4.								
5.								

**\*Օանդություն**

1. Համագործակցությունը նպատակահարմար չէ մեր կազմակերպության համար:
2. Համագործակցությունը նպատակահարմար չէ Ակադեմիայի համար:
3. Համագործակցությունը նպատակահարմար չէ ինչպես Ակադեմիայի, այնպես էլ կազմակերպության համար:
4. Համագործակցությունը նպատակահարմար է, սակայն պասիվություն է ցուցաբերվել Ակադեմիայի կողմից:
5. Համագործակցությունը նպատակահարմար է, սակայն պասիվություն է ցուցաբերվել մեր կողմից:
6. Համագործակցությունը նպատակահարմար է, սակայն երկկողմանի պասիվություն է ցուցաբերվել:
7. Դժվարանում եմ պատասխանել:

**4. Նշե՛ք Ակադեմիայի և Ձեր կազմակերպության միջև ստորև նշված ուղղություններով հնարավոր համագործակցության իրականացման վերաբերյալ Ձեր դիրքորոշումը.**

N	Ուղղությունը	Դիրքորոշումը*					
		1	2	3	4	5	6
1.	Ակադեմիայի շրջանավարտներին աշխատանքի ընդունելը						
2.	Սովորողների համար պրակտիկաների կազմակերպում						
3.	Կազմակերպության աշխատողների վերապատրաստում Ակադեմիայում						
4.	Կազմակերպության աշխատողներից ասպիրանտների և դոկտորանտների պատրաստում Ակադեմիայում						
5.	Համատեղ միջոցառումների (համաժողովներ, կլոր սեղաններ, քննարկումներ և այլն) կազմակերպում						
6.	Կազմակերպության մասնակցությունը կրթական ծրագրերի մշակման աշխատանքներին						
7.	Կազմակերպության մասնակցությունը Ակադեմիայի ուսումնական գործընթացին (դասավանդում և այլն)						
8.	Կազմակերպության կողմից աջակցության ցուցաբերում Ակադեմիայի նյութատեխնիկական բազայի ամրապնդման աշխատանքներին						
9.	Հետազոտությունների արդյունքների ներդրում						

**\*Շանթություն.**

1. Հնարավոր է և շատ օգտակար:
2. Հնարավոր է, սակայն կարող են առաջանալ որոշ դժվարություններ:
3. Հնարավոր է, սակայն համագործակցությունը կարող է ժամանակավոր լինել:

4. Հնարավոր չէ համագործակցել. այն իրականացնելու համար առկա են մի շարք սուբյեկտիվ պատճառներ:
5. Հնարավոր չէ համագործակցել. այն իրականացնելու համար առկա են մի շարք օբյեկտիվ պատճառներ:
6. Դժվարանում եմ պատասխանել:

**5. Ի՞նչ նոր ուղղություններով կնախընտրեիք համագործակցել Ակադեմիայի հետ:**

---

---

---

---

---

**Ն Շ ՈՒ Մ Ն Ե Ր**

---

---

---

---

---

**Շնորհակալություն համագործակցության համար**

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ) ՆԿԱՐԱԳՐԻ ՁԵՎԱԶԱՓ

Հ/Հ	Անվանումը	Նկարագիրը
1	2	3
	<b>1. Մասնագիտության (որակավորման) ընդհանուր բնութագիրը</b>	
1.1.	<b>Մասնագիտության (որակավորման) անվանումը և կոդը</b>	Նշվում է մասնագիտության, որակավորման անվանումը և կոդը՝ համաձայն մասնագիտությունների ցանկի (ՀՀ կառավարության թիվ որոշում):
1.2.	<b>Կրթական ծրագրի առաքելությունը</b>	Ձևակերպվում է՝ ելնելով կրթական ծրագրի իրականացման անհրաժեշտությունից:
1.3.	<b>Կրթական ծրագրի նպատակները</b>	Ձևակերպվում են ընդհանրական նպատակներ, որոնց միտված է ծրագիրը (կարող է հիմք հանդիսանալ ՀՀ զբաղմունքների դասակարգիչը):
1.4.	<b>Կրթական ծրագրի խնդիրները</b>	Ձևակերպվում է համաձայն սահմանված նպատակների (կարող է հիմք հանդիսանալ ՀՀ զբաղմունքների դասակարգիչը):
1.5.	<b>Ծրագրի շրջանավարտների մասնագիտական գործունեության ասպարեզը</b>	Կարող է նշվել զբաղմունքների դասակարգչի, ինչպես նաև աշխատաշուկայի ուսումնասիրության և ծրագրում սահմանված նպատակների և առաքելության հիման վրա:
1.6.	<b>Ծրագրի շրջանավարտների մասնագիտական գործունեության օբյեկտները</b>	Կարող է նշվել զբաղմունքների դասակարգչի, ինչպես նաև աշխատաշուկայի ուսումնասիրության և ծրագրում սահմանված նպատակների և առաքելության հիման վրա:
7.	<b>Ծրագրի շրջանավարտների մասնագիտական գործունեության տարատեսակները</b>	Կարող է նշվել զբաղմունքների դասակարգչի, ինչպես նաև աշխատաշուկայի ուսումնասիրության և ծրագրում սահմանված նպատակների և առաքելության հիման վրա:

1	2	3
2.	<b>Դերը</b>	Նշվում է մասնագիտական գործունեության համար պահանջվող որակական ընդհանրական հատկանիշները, որոնք ձեռք են բերվել շրջանավարտի կողմից կրթության արդյունքում և մասնագետի դերը իր աշխատանքային գործունեության ժամանակ:
3.	<b>Խնդիրների բնագավառը և աշխատանքային գործընթացները</b>	
	<b>Խնդիր</b>	Նշվում են այն խնդիրները, որոնց լուծմամբ պետք է զբաղվի շրջանավարտն իր աշխատատեղում կրթական հաստատությունում ուսումնառությունն ավարտելուց հետո:
	<b>Աշխատանքային գործընթացները</b>	Նշվում են այն քայլերը, որոնց կատարման արդյունքում շրջանավարտն իր աշխատատեղում լուծում է առաջացած խնդիրները:
4.	<b>Պատասխանատվությունը</b>	Նշվում է աշխատատեղում շրջանավարտի պատասխանատվության շրջանակը:
5.	<b>Բարդության աստիճանը</b>	Նշվում է աշխատատեղում շրջանավարտի կողմից կատարվող աշխատանքի բարդության աստիճանը՝ համաձայն «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ՀՀ դասակարգչի»:
6.	<b>Կոմպետենցիաների նկարագիրը</b>	
6.1.	<b>Մասնագիտական գիտելիքներ</b>	<b>Գնահատման չափանիշը</b>
	Թվարկվում են այն մասնագիտական գիտելիքները, որոնք պետք է իմանա շրջանավարտը կրթական հաստատությունն ավարտելու պահին:	Նշվում են այն չափանիշները, որոնց միջոցով պետք է գնահատվեն մասնագիտական գիտելիքները:

1	2	3
6.2.	<b>Մասնագիտական կարողություններ</b>	<b>Գնահատման չափանիշը</b>
	Թվարկվում են այն մասնագիտական կարողությունները, որոնք պետք է կարողանա կատարել շրջանավարտը կրթական հաստատությունն ավարտելու պահին:	Նշվում են այն չափանիշները, որոնց միջոցով պետք է գնահատվեն մասնագիտական կարողությունները:
6.3.	<b>Մասնագիտական հմտություններ</b>	<b>Գնահատման չափանիշը</b>
	Թվարկվում են այն մասնագիտական հմտությունները, որոնք պետք է կարողանա ցուցաբերել շրջանավարտը կրթական հաստատությունն ավարտելու պահին:	Նշվում են այն չափանիշները, որոնց միջոցով պետք է գնահատվեն մասնագիտական հմտությունները:
6.4.	<b>Անձնական հմտություններ</b>	<b>Գնահատման չափանիշը</b>
	Թվարկվում են այն անձնական հմտությունները, որոնց պետք է տիրապետի շրջանավարտը կրթական հաստատությունն ավարտելու պահին:	Նշվում են այն չափանիշները, որոնց միջոցով պետք է գնահատվեն անձնական հմտությունները:
7.	<b>Որակավորման մակարդակը</b>	Նշվում է կրթության որակավորման մակարդակը՝ համաձայն ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի:



**Առանցքային հարցերի թյունինգյան ցանկ՝ կրթական ծրագրի մշակման, իրականացման, գնահատման և հետագա կատարելագործման վերաբերյալ<sup>12</sup>**

**ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ**

<b>Բնութագրեր</b>	<b>Առանցքային հարցեր</b>
<b>Որակավորման պրոֆիլ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Որքա՞ն հստակ և ամբողջական է որոշված նոր կամ լրամշակվող կրթական ծրագրի պահանջարկվածությունը և դրա իրականացման հնարավորությունը:</li> <li>- Նպատակաուղղվա՞ծ է այն առկա կամ նոր մասնագիտական և/կամ հանրային կարիքների բավարարմանը:</li> <li>- Կայացե՞լ են արդյոք խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ: Հաստատե՞լ են արդյոք նրանք ծրագրի իրականացման անհրաժեշտությունը:</li> <li>- Խորհրդակցությունների անցկացման ժամանակ օգտագործվե՞լ է արդյոք համարժեք մոտեցում: Ընտրվե՞լ են խորհրդատվական այնպիսի խմբեր, որոնք գիտակ են դիտարկվող առարկայական ոլորտին:</li> <li>- Հստա՞կ է արդյոք սահմանված ծրագրի պրոֆիլը, և որոշվա՞ծ են նրա թիրախային խմբերը, դրանց տեղը ազգային և միջազգային համատեքստում:</li> <li>- Կա՞ն արդյոք համոզիչ ապացույցներ, որ ծրագրի սահմանված պրոֆիլն ապագայում կճանաչվի աշխատաշուկայում: Առնչվո՞ւմ է այն որոշակի մասնագիտական կամ սոցիալական համատեքստի:</li> <li>- Ակադեմիական տեսանկյունից ծրագրի պրոֆիլը կարևոր և հետաքրքի՞ր է ուսանողների և դասախոսական կազմի համար:</li> <li>- Առկա՞ է այն կրթական համատեքստի լիարժեք ընկալումը, որի շրջանակներում պետք է իրականացվի ծրագիրը:</li> </ul>

<sup>12</sup> Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց, Բարձրագույն կրթության ուսումնական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ, 77-83 էջեր:

<p><b>Կրթական վերջնարդյունքներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Որոշվե՞լ են հստակ և համարժեք կրթական վերջնարդյունքներ ամբողջական կրթական ծրագրի և նրա յուրաքանչյուր միավորի համար:</li> <li>- Արդյունքում այդ կրթական վերջնարդյունքներն արտացոլո՞ւմ են ծրագրի սահմանված պրոֆիլը: Համարժեք են արդյոք դրանք բաշխված ծրագրի տարբեր մասերի միջև:</li> <li>- Արդյոք բավարար չափով երաշխավորվա՞ծ է ծրագրի կատարման առաջընթացը և նրա առանձին միավորների փոխկապակցվածությունը:</li> <li>- Արդյոք կրթական վերջնարդյունքները ձևակերպվա՞ծ են բուն մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների տերմիններով, որոնք ներառում են գիտելիք, ընկալում, ձիրքեր, կարողություններ և արժեքներ:</li> <li>- Ի՞նչ երաշխիքներ կան, որ կրթական վերջնարդյունքները կճանաչվեն և կհասկացվեն Եվրոպայում և նրա սահմաններից դուրս:</li> </ul>
<p><b>Կոմպետենցիաներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Արդյոք հստակ են որոշված և ձևակերպված ուսանողի կողմից ձեռք բերվող բուն մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները:</li> <li>- Արդյոք ձեռք բերվող կոմպետենցիաների մակարդակը համապատասխանո՞ւմ է տվյալ կրթական ծրագրի (որակավորման աստիճանի) մակարդակին:</li> <li>- Արդյոք ձեռք բերվող կոմպետենցիաները ձևակերպված են այնպես, որ դրանք գործնականում լինեն չափելի:</li> <li>- Արդյոք երաշխավորվա՞ծ է կոմպետենցիաների զարգացման առաջընթացը:</li> <li>- Կարո՞ղ են ձեռք բերված կոմպետենցիաները պատշաճ կերպով գնահատվել: Արդյոք հստակ է սահմանված կոմպետենցիաների գնահատման մեթոդաբանությունը, կիրառելի՞ է այն նախանշված կրթական արդյունքների համար:</li> <li>- Արդյոք հստակ են որոշված կոմպետենցիաների ձևավորման համար դասավանդման և ուսումնառության ընտրված մոտեցումները: Ի՞նչ երաշխիքներ (հիմնավորումներ) կան, որ ակնկալվող արդյունքները ձեռք կբերվեն:</li> <li>- Արդյոք ընտրված մոտեցումները բավարար չափով բազմազան և նորարարակա՞ն են:</li> <li>- Կարո՞ղ են սահմանված կոմպետենցիաները համեմատվել և համադրվել տվյալ առարկայական</li> </ul>

	<p>ոլորտում եվրոպական էտալոնային կողմնորոշիչների հետ (եթե կիրառելի է):</p>
<p><b>Կրթական մակարդակ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Պոստենցիալ դիմորդների/ուսանողների կրթական պահանջմունքները որոշելիս հաշվի առնվում է արդյոք ընդունելության պահին նրանց գիտելիքների (նախնական) մակարդակը:</li> <li>- Ծրագրի կրթական արդյունքների և կոմպետենցիաների մակարդակը համապատասխանում է եվրոպական կամ ազգային որակավորումների հենքով սահմանված աստիճանի (շրջափուլի) մակարդակ(ներ)ին:</li> <li>- Եթե ներառված են ենթամակարդակներ, ապա դրանք նկարագրվա՞ծ են կոմպետենցիաներով արտահայտված կրթական վերջնարդյունքներով:</li> <li>- Նկարագրվա՞ծ են արդյոք մակարդակները հետևյալ տեսանկյուններից. <ul style="list-style-type: none"> <li>✓ գիտելիքի, ընկալման, հմտությունների և կարողությունների ձեռքբերման,</li> <li>✓ գիտելիքի, ընկալման, հմտությունների և կարողությունների գործնական կիրառման,</li> <li>✓ տեղեկատվության հիման վրա դատողությունների արտահայտման և որոշումների կայացման,</li> <li>✓ գիտելիքի և ընկալման փոխանցման/փոխանակման,</li> <li>✓ ուսումնառությունը շարունակելու հնարավորությունների և այլն:</li> </ul> </li> </ul>
<p><b>Կրեդիտներ և ուսումնական բեռնվածք</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Հիմնվա՞ծ է կրթական ծրագիրը ECTS կրեդիտների վրա: Համահունչ է այն ECTS–ի առանցքային դրույթներին:</li> <li>- Հատկացվա՞ծ են կրեդիտներ կրթական ծրագրին և նրա առանձին միավորներին: Ինչպե՞ս է երաշխավորված կրեդիտների հատկացման պատշաճությունը:</li> <li>- Ինչպե՞ս են կապակցված կրեդիտները ծրագրի կրթական վերջնարդյունքների հետ:</li> <li>- Ինչպե՞ս է վերահսկվում կապը իրական ուսումնական բեռնվածքի և հատկացված կրեդիտների միջև:</li> <li>- Ինչպե՞ս է երաշխավորվում ուսանողի հավասարակշռված ուսումնական բեռնվածությունը ուսումնառության յուրաքանչյուր շրջանի համար:</li> <li>- Ուսումնառության, դասավանդման ու գնահատման ընտրված մեթոդներին համահունչ կրեդիտների</li> </ul>

	<p>հատկացման ի՞նչ մեխանիզմներ են գործում: Ինչպե՞ս են ներգրավված ուսանողներն այդ գործընթացներում:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ծրագրի (դասընթացների և/կամ կրթական մոդուլների) վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվա՞ծ է արդյոք ECTS–ի ուղեցույցի պահանջներին համապատասխան:</li> <li>- Ինչպե՞ս է ծրագիրը ապահովում ուսանողների ակադեմիական շարժունության հնարավորությունները:</li> <li>- Ինչպե՞ս է կազմակերպված ուսանողների խորհրդատվությունը շարժունության հնարավորությունների վերաբերյալ:</li> <li>- Ինչպե՞ս են օգտագործվում ECTS–ի առանցքային փաստաթղթերը շարժունության համար:</li> <li>- Ո՞վ է պատասխանատվություն կրում ճանաչման գործընթացների համար, ինչպիսի՞ ընթացակարգեր են գործում այդ դեպքում:</li> </ul>
<b>Ռեսուրսներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Ինչպե՞ս է երաշխավորվում ծրագրի պաշտոնական ճանաչումը (հաստատումը) և այն իրականացնելու համար պահանջվող ռեսուրսների առկայությունը:</li> <li>- Ծրագրի իրականացման համար առկա՞ է արդյոք անհրաժեշտ անձնակազմ (դասախոսական և օժանդակ կազմ, պրակտիկայի ղեկավարներ): Ծրագիրը պահանջո՞ւմ է այլ ամբիոններից/բուհերից դասախոսական կազմի ներգրավում:</li> <li>- Նախատեսվո՞ւմ է անձնակազմի վերապատրաստում/կատարելագործում ուսումնառության, դասավանդման և գնահատման նոր մեթոդների ասպարեզում:</li> <li>- Ինչպե՞ս է ապահովվում անհրաժեշտ ենթակառուցվածքների, ֆինանսական, տեխնիկական և ուսումնառության միջոցների ու ռեսուրսների (լսարաններ, սարքավորումներ, գրադարան, տեղեկատվական համակարգեր և այլն) առկայությունը:</li> </ul>

**Ծրագրի իրագործումը, գնահատումը և կատարելագործումը**

<p><b>Մոնիթորինգ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ինչպե՞ս է վերահսկվում ծրագրի և նրա առանձին բաղադրիչների իրականացման որակը:</li> <li>- Ինչպե՞ս է վերահսկվում դասախոսական կազմի որակը և նրանց շահագրգռվածությունը ծրագրի իրականացման հարցում:</li> <li>- Գործո՞ւմ են ուսումնական միջավայրի և աշխատատեղի որակի գնահատման համակարգեր՝ հատկապես պրակտիկաների և աշխատանքի հետ համակցված ուսուցման պարագայում:</li> <li>- Բավարա՞ր է արդյոք ծրագրի իրագործման համար պահանջվող (ներառյալ պրակտիկաները) լսարանների և սարքավորումների որակը:</li> <li>- Ինչպե՞ս է գնահատվում պոտենցիալ դիմորդների/ուսանողների գիտելիքների նախնական մակարդակը:</li> <li>- Ինչպե՞ս է գնահատվում և վերահսկվում ուսանողների առաջադիմությունը (կատարողականը)՝ ստացվող կրթական վերջնարդյունքների/ձեռք բերվող կոմպետենցիաների որակի, ինչպես նաև ծրագրի և նրա առանձին միավորների յուրացման համար պահանջվող ժամանակի առումով:</li> <li>- Ինչպե՞ս է իրականացվում շրջանավարտների աշխատանքի տեղավորման/զբաղվածության մոնիթորինգը:</li> <li>- Ինչպե՞ս է կազմված շրջանավարտների տվյալների բազան:</li> <li>- Հավաքվո՞ւմ են արդյոք տվյալներ՝ ծրագրից շրջանավարտների բավարարված լինելու վերաբերյալ:</li> </ul>
<p><b>Նորացում/վերանայում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ինչպե՞ս է կատարվում կրթական ծրագրի նորացման կամ վերանայման համակարգը:</li> <li>- Ծրագրում ինչպե՞ս են հաշվի առնվում հասարակության արտաքին զարգացումներին առնչվող փոփոխությունները:</li> <li>- Ինչպե՞ս է կատարվում դասախոսական կազմի կատարելագործումը/վերապատրաստումը ծրագրի նորացման կամ վերանայման դեպքում:</li> </ul>
<p><b>Շարունակականություն և պատասխանատվություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ինչպե՞ս է երաշխավորվում ծրագրի շարունակականությունը:</li> <li>- Ո՞վ է պատասխանատվություն կրում ծրագրի շարունակական նորացման և արդիականացման համար:</li> </ul>

<p><b>Կազմակերպում և իրագրություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ինչպե՞ս է ապահովվում կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվության թարմացումը:</li> <li>- Ինչպե՞ս է ապահովվում ուսանողների օժանդակության և խորհրդատվության համակարգի արդյունավետությունը:</li> <li>- Ուսանողներին ավտոմատ կերպով և անվճար տրվո՞ւմ է արդյոք համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված եվրոպական տարածված լեզուներից որևէ մեկով:</li> </ul>
---	---

Կրթական ծրագրի գնահատման թյունինգյան ստուգիչ հարցաշար<sup>13</sup>

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Բնութագրեր	Ելակետային պայմաններ	Հարցեր
<p><b>1. Որակավորման/ծրագրի պրոֆիլը</b></p>	<p>Կրթական ծրագիրն ունի հստակ սահմանված պրոֆիլ, որը մի կողմից հիմնվում է որակավորման ակադեմիական պահանջների, իսկ մյուս կողմից՝ հանրային պահանջմունքների վրա և հաշվի է առնում աշխատաշուկայի կարիքները տվյալ ծրագրի շրջանավարտների համար:</p>	<p>Ինչպե՞ս են առկա տվյալները փաստում, որ ծրագրի պրոֆիլը բավարարում է առաջադրված պահանջներին: Անհրաժեշտության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ կարող են կատարվել:</p>
<p><b>2. Կրթական վերջնարդյունքները և կոմպետենցիաները ծրագրի մակարդակում</b></p>	<p>Կրթական ծրագիրն ունի հստակ սահմանված կրթական վերջնարդյունքներ, որոնք արտացոլում են ծրագրի պրոֆիլը: Այդ կրթական վերջնարդյունքները նկարագրված են ուսանողների կողմից ձեռք բերվող կոմպետենցիաների միջոցով (գիտելիք, ընկալում և հմտություններ):</p>	<p>Որքանո՞վ են ուսանողների կողմից ձեռք բերվող կրթական արդյունքները և կոմպետենցիաները համապատասխանում ծրագրի պրոֆիլին: Անհրաժեշտության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ կարող են կատարվել:</p>

<sup>13</sup> Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ, 84-90 էջեր:

Աղգաշյան Ռ.Վ., Արզումանյան Կ.Ս., Բալաբանյան Հ.Ա., Մամյան Ս.Զ., Սարգսյան Յու.Լ., «Ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա կրթական ծրագրերի մշակման և վերակառուցման համար մեթոդական ուղեցույց», Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ), Երևան-2011, 38 էջ, 36-38 էջեր:

<p><b>3. Կրթական վերջնարդյունքները և կոմպետենցիաները ծրագրի առանձին միավորի մակարդակում</b></p>	<p>Կրթական ծրագրի յուրաքանչյուր միավորի համար ձևակերպված է մոտ 5 կրթական վերջնարդյունք, որոնք ակնհայտորեն նպաստում են սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը ծրագրի մակարդակում: Կրթական վերջնարդյունքները նկարագրված են ձեռք բերվող կոմպետենցիաների միջոցով (գիտելիք, ընկալում և հմտություններ):</p>	<p>Նկարագրվում են արդյոք կրթական վերջնարդյունքները ծրագրի յուրաքանչյուր միավորում և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ բացատրվում են: Այդ նկարագրություններում կիրառվում են արդյոք մասնագիտական կոմպետենցիաները: Նշված է արդյոք, թե կոմպետենցիաները որ մակարդակին են համապատասխանում:</p>
<p><b>4. Ուսումնական պլանի կառուցվածքը և ծրագրի բաղադրիչների/ կրթական մոդուլների հաջորդականությունը</b></p>	<p>Ուսումնական պլանը կառուցված է այնպես, որ ապահովվի ամբողջական ծրագրի և նրա առանձին միավորների համակարգվածությունը ծրագրի իրականացման տարբեր փուլերում: Ծրագիրն ապահովում է ակնկալվող ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաների (գիտելիքի, ընկալման և հմտությունների տեսքով) աստիճանական ձեռքբերումը:</p>	<p>Գործնականում ինչպե՞ս է երևում, որ ուսումնական պլանը կառուցված է այնպես, որ ապահովվի նրա համակարգվածությունը և ակնկալվող կրթական արդյունքների և կոմպետենցիաների աստիճանական ձեռքբերումը: Անհրաժեշտության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ կարող են կատարվել:</p>
<p><b>5. Ուսումնական բեռնվածքի բաշխումը</b></p>	<p>Կրթական ծրագիրը կառուցված է այնպես, որ պահպանվում է ընդհանուր բեռնվածության հավասարաչափ բաշխումը ամբողջ ծրագրում՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա և կիսամյակի համար: Ծրագրի յուրաքանչյուր միավորի համար հաշվարկված բեռնվածքը համապատասխանում է այն</p>	<p>Գործնականում ինչպե՞ս է երևում, որ ընդհանուր բեռնվածքը բաշխված է վերոնշյալ պայմաններին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ կարող են կատարվել:</p>



	<p>ժամանակին, որն անհրաժեշտ է միջին ուսանողին պահանջվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար:</p>	
<p><b>6. Ծրագրի իրագործելիությունը</b></p>	<p>Ծրագիրը կազմված է այնպես, որ այն սահմանված ժամկետում իրագործելի է միջին ուսանողի համար: Այն ենթադրում է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հաջող համակցում, ծրագրի բաղադրիչների միջև անհարկի խոչընդոտների բացակայություն, ինչպես նաև անհրաժեշտ ղեկավարում/խորհրդատվություն դասախոսական կազմի կողմից:</p>	<p>Ինչպե՞ս է երաշխավորվում դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների փոխհավասարակշռված համակցումը և դասախոսական կազմի կողմից բավարար ղեկավարումը: Երաշխավորվա՞ծ է արդյոք, որ ծրագրի միավորների համար մուտքի պահանջներ են սահմանվում միայն այն դեպքերում, երբ դրանք թելադրված են կրթական բովանդակությամբ:</p>
<p><b>7. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները</b></p>	<p>Կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները տարբեր (բազմազան) են և ընտրված այնպես, որպեսզի առավելագույնս օբյեկտիվ գնահատեն ակնկալվող կրթական վերջնարդյունքների/կոմպետենցիաների ձեռքբերման մակարդակը:</p>	<p>Երաշխավորվո՞ւմ է արդյոք առկա տեղեկատվությունը, որ վերոհիշյալ պայմանները կատարվում են: Անհրաժեշտության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ կարող են կատարվել:</p>
<p><b>8. Կապը նախորդ կրթական մակարդակի հետ</b></p>	<p>Ծրագիրը մշակված է այնպես, որ հաշվի է առնում ուսանողների (դիմորդների) գիտելիքների նախնական մակարդակը: Առաջին շրջափուլի ծրագրերի դեպքում այդ մակարդակն առնչվում է միջնակարգ կրթությանը, իսկ երկրորդ շրջափուլի ծրագրերի դեպքում՝ առաջին շրջափուլի</p>	<p>Որքանո՞վ է ծրագիրը սահուն անցում ապահովում առաջին և երկրորդ շրջափուլերի մուտքի պահանջների տեսանկյունից: Անհրաժեշտության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ կարող են կատարվել:</p>

	ծրագրերին:	
<b>9. Միջազգային համագործակցություն (ուսանողների շարժունություն)</b>	Ծրագիրն իրականացվում է արտասահմանյան գործընկեր բուհերի հետ համագործակցությամբ: Այն կարող է լինել համատեղ աստիճանների շնորհման և/կամ ուսանողների փոխանակման ծրագրերի տեսքով՝ գործընկեր բուհերում ուսանողների կրթական ձեռքբերումների փոխադարձ ճանաչմամբ:	Ինչո՞վ է երաշխավորվում, որ ուսանողները դուրս չեն մնա ուսումնական գրաֆիկից, եթե իրենց ծրագրով ուսումնառությունը շարունակվի արտասահմանյան գործընկեր բուհում:

**Կրթական վերջնարդյունքներ**

<b>10. Առաջին և երկրորդ շրջափուլերի արդյունքները</b>	Ֆակուլտետի/ամբիոնի գործունեությունն ուղղորդված է հետևյալ նպատակների իրագործմանը. ուսման առաջին տարին հաջողությամբ ավարտած ուսանողների տոկոսը՝ X (ծրագրի մեկնարկից առավելագույնը 2 տարի անց), առաջին շրջափուլը հաջողությամբ ավարտածների %-ը, որը հաշվարկված է ուսման առաջին տարին հաջողությամբ ավարտած ուսանողների թվից՝ Y (կրթական ծրագրի մեկնարկից 4 տարի անց), երկրորդ շրջափուլը հաջողությամբ ավարտածների %-ը՝ Z (կրթական ծրագրի մեկնարկից 2 կամ 3 տարի անց):	Ապահովու՞մ է արդյոք ծրագիրը սահմանված ցուցանիշները (տոկոսները): Եթե ոչ, ապա ինչո՞ւ: Արդյունքում ի՞նչ միջոցառումներ է պետք ձեռնարկել՝ իրադրությունը շտկելու համար:
<b>11. Աշխատատեղերի/աշխատանքի անցնելու հնարավորությունները</b>	Կրթական ծրագիրը բավարարում է հանրային կարիքները, ինչը հաստատվում է այն փաստով, որ ծրագրի շրջանավարտներն ընդհանուր առմամբ հեշտությամբ են աշխատանք գտնում:	Արդյոք շրջանավարտները ողջամիտ ժամկետներում գտնո՞ւմ են այնպիսի աշխատանք, որը համապատասխանում է

<b>(ծառայու- նակությունը)</b>		ծրագրի պրոֆիլին և մակարդակին:
-----------------------------------	--	-------------------------------

**Պահանջվող ենթակառուցվածքներ և միջոցներ**

<b>12. Ենթակա- ռուցվածքներ և տեխնիկական միջոցներ</b>	Առկա են բավարար շենքային և տեխնիկական ենթակառուցվածքներ և ռեսուրսներ կրթական ծրագրի հաջող իրականացման համար:	Գործնականում կա՞ն ծրագրի իրականացման դժվարություններ և խոչընդոտներ՝ կապված պահանջվող ենթակառուցվածքների և այլ ռեսուրսների հետ
<b>13. Դասախո- սական կազմ և ուսումնառու- թյան ռեսուրսներ</b>	Ծրագրի հաջող իրականացման համար առկա են բավարար թվով և անհրաժեշտ որակի դասախոսական և ուսումնասօժանդակ (վարչական և տեխնիկական) կազմեր: Ցուրաքանչյուր ծրագիր/կազմակերպական կառույց ապահովված է բավարար ռեսուրսներով ծրագրի հաջող իրականացման համար (հրավիրված դասախոսներ, ուսումնական նյութեր և այլն):	Հատկացված միջոցները գործնականում որքանո՞վ են բավարարում ելակետային պայմաններին և պլաններին համապատասխան ծրագիրն իրականացնելու համար:
<b>14. Ուսանող- ների օժանդա- կություն և խորհրդա- տվություն</b>	Առկա է ուսանողներին հասանելի ուսումնառության օժանդակության և խորհրդատվության համակարգ, որը համապատասխանում է ուսանողական կազմի և ուսուցման ձևերի առանձնահատկություններին:	Ինչպե՞ս են բավարարում ուսանողների օժանդակության և խորհրդատվության համակարգի կարիքները:

**ԴՌԻՔԼԻՆԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ<sup>14</sup>**

Դուբլինի նկարագրիչները տալիս են այդ չորս տարբեր որակավորումների հետևյալ նկարագրությունը.

**Որակավորումներ, որոնք նշում են բարձրագույն կրթության կարճ փուլի ավարտը (առաջին փուլի շրջանակներում), շնորհվում են այն ուսանողներին, ովքեր՝**

- դրսևորել են ուսման բնագավառում գիտելիք և պատկերացում, որոնց համար հիմք է ծառայել ընդհանուր միջնակարգ կրթությունը, և սովորաբար այնպիսի մակարդակում, որում կան խորացված դասագրքեր. նման գիտելիքը հիմք է հանդիսանում աշխատանքի բնագավառի կամ մասնագիտության, անհատական զարգացման և առաջին փուլը ավարտելու նպատակով հետագա ուսման համար,
- կարող են կիրառել իրենց գիտելիքն ու պատկերացումը մասնագիտության համատեքստում,
- ունեն լավ սահմանված կոնկրետ և վերացական խնդիրներին պատասխաններ տալու համար տվյալներ հայտնաբերելու և օգտագործելու կարողություն,
- կարող են իրենց պատկերացումների, հմտությունների և գործունեության շուրջ հաղորդակցվել գործընկերների, ղեկավարների և հաճախորդների հետ,
- ...ունեն որոշ ինքնուրույնությամբ հետագա ուսումնառությունն իրականացնելու համար անհրաժեշտ սովորելու հմտություններ:

**Որակավորումներ, որոնք նշում են առաջին փուլի ավարտը, շնորհվում են այն ուսանողներին, ովքեր՝**

- դրսևորել են ուսման բնագավառում գիտելիք և պատկերացում, որոնք հիմնվել են ընդհանուր միջնակարգ կրթության վրա կամ փոխարինել են նրանց միջնակարգ կրթությանը, և սովորաբար այնպիսի մակարդակում, որում թեև կան խորացված դասագրքեր,

---

<sup>14</sup> Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված («Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի հետ համատեղ) որակի ապահովման պատասխանատուների և պրոֆեսորադասախոսական կազմի թվով 400 ներկայացուցիչների վերապատրաստման նյութեր:

սակայն դրա որոշ կողմերին կարելի է հասնել իրենց ուսման բնագավառի առաջավոր գիտելիքի իմացության միջոցով,

- ...կարող են իրենց գիտելիքն ու պատկերացումը կիրառել այն ձևով, որը ցույց է տալիս արհեստավարժ մոտեցում իրենց աշխատանքի կամ մասնագիտության նկատմամբ, և ունեն կարողություններ, որոնք սովորաբար դրսևորվում են իրենց ուսումնառության առարկայի շրջանակներում փաստարկների մշակման, հիմնավորման ու խնդիրների լուծման մեջ,
- ունեն համապատասխան տվյալներ հավաքելու և մեկնաբանելու ունակություն (սովորաբար իրենց ուսումնառության առարկայի շրջանակներում)՝ սոցիալական, գիտական և բարոյական համապատասխան խնդիրների շուրջ մտորումների վրա հիմնված դատողություններ առաջ քաշելու նպատակով,
- կարող են տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ և լուծումներ հաղորդել ինչպես մասնագետ, այնպես էլ ոչ մասնագետ լսարանին,
- զարգացրել են ուսումնառության այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են շարունակելու հետագա ուսումը՝ ինքնուրույնության բարձր աստիճանով:

**Որակավորումներ, որոնք նշում են երկրորդ փուլի ավարտը, շնորհվում են այն ուսանողներին, ովքեր՝**

- դրսևորել են գիտելիք և պատկերացում, որոնք հիմնվում են բակալավրի աստիճանի վրա և սովորաբար ընդլայնվում և/կամ կատարելագործվում՝ կապված դրա հետ, և որոնք հիմք են ծառայում կամ հնարավորություն են տալիս ինքնատիպ լինելու գաղափարներ մշակելիս կամ կիրառելիս, հաճախ որևէ գիտահետազոտական աշխատանքի համատեքստում,
- կարող են իրենց գիտելիքն ու պատկերացումը, ինչպես նաև խնդիր լուծելու ունակությունները կիրառել նոր կամ անծանոթ միջավայրերում իրենց ուսման բնագավառին առնչվող ավելի լայն (կամ բազմառարկայական ) համատեքստերում,
- ունեն ունակություն, որը թույլ է տալիս գիտելիքն ինտեգրել ու հաղթահարել բարդ իրավիճակները, ինչպես նաև ձևակերպել դատողություններ, որոնք հիմնվում են ոչ լրիվ կամ սահմանափակ տեղեկությունների վրա, սակայն ձևավորվում են սոցիալական և բարոյական պատասխանատվության շուրջ մտորումների արդյունքում՝ կապված իրենց գիտելիքի և դատողությունների կիրառման հետ,
- կարող են հաղորդել իրենց եզրակացությունները և դրանց համար հիմք հանդիսացող գիտելիքն ու տրամաբանական կառուցվածքը մասնագետ և ոչ մասնագետ լսարանին հստակորեն և միանշանակորեն,

- ունեն սովորելու հմտություններ, որոնք թույլ են տալիս ուսումնառությունը շարունակել ինքնուրույն կամ անկախ:

**Որակավորումներ, որոնք նշում են երրորդ փուլի ավարտը, շնորհվում են այն ուսանողներին, ովքեր՝**

- դրսևորել են ուսումնառության որևէ ոլորտի մասին համակարգված պատկերացում և ձեռք են բերել այդ ոլորտի հետ կապված հմտություններ ու գիտահետազոտական մեթոդներ,
- դրսևորել են հետազոտության իրական գործընթացը գիտական հստակությամբ նախաձեռնելու, մշակելու, կիրառելու և տեղայնացնելու ունակություն,
- իրենց մասնաբաժինն են ներդրել գիտելիքի սահմաններն ընդլայնող ինքնատիպ հետազոտության միջոցով՝ մշակելով զգալի նյութեր, որոնց մի մասը հրապարակվել է երկրում ու դրա սահմաններից դուրս,
- ի վիճակի են քննադատական վերլուծության ենթարկել, գնահատել և սինթեզել նոր և բարդ գաղափարներ,
- կարող են հաղորդակցվել իրենց գործընկերների, ավելի լայն գիտական համայնքի և ընդհանուր առմամբ հասարակության հետ իրենց փորձառության բնագավառի շուրջ,
- կարելի է ակնկալել, որ գիտելիքի վրա հիմնված հասարակության մեջ ուսումնական և մասնագիտական շրջանակներում կարող են խթանել տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային առաջընթացը:

Դուբլինի նկարագրիչները նաև օգտակար են այն առումով, որ համեմատում են ակնկալիքները հինգ ոլորտներում՝ գիտելիք և պատկերացում, դրանց կիրառումը, դատողություններ անելը, հաղորդակցվելը և ուսման հմտությունները: Յուրաքանչյուր 3 փուլի համար ակնկալիքները (կարճ փուլի որակավորումներն այստեղ ընդգրկված չեն) ներկայացված են աղյուսակ 2.3-ում:

*Աղյուսակ 2.3*

**Դուբլինի նկարագրիչներ. փուլերի տարբերակում**

Փուլ	Ակնկալիքներ
<b>Գիտելիք և ըմբռնում</b>	
1 (բակալավր)	Ձեռք է բերվում խորացված դասագրքերի շնորհիվ և միաժամանակ ունի որոշ կողմեր, որոնք ձեռք են բերվում իրենց ուսումնառության բնագավառի առաջավոր գիտելիքի իմացության միջոցով

2 (մագիստրոս)	Հիմք է ծառայում կամ հնարավորություն է ընձեռում ինքնատիպության՝ գաղափարներ մշակելիս կամ կիրառելիս, հաճախ որևէ գիտահետազոտական աշխատանքի համատեքստում
3 (դոկտոր)	Ներառում է իրենց ուսումնառության ոլորտի մասին համակարգված պատկերացում և այդ ոլորտի հետ կապված հմտություններ ու գիտահետազոտական մեթոդներ
<b>Կիրառելով գիտելիք և ըմբռնում</b>	
1 (բակալավր)	Փաստարկների մշակման և հիմնավորման միջոցով
2 (մագիստրոս)	Խնդրի լուծման ունակությունների միջոցով կիրառված նոր և անձանոթ միջավայրերում ավելի լայն կամ բազմառարկայական համատեքստերում
3 (դոկտոր)	(դրսևորում է) հետազոտության իրական գործընթացը գիտական հստակությամբ նախաձեռնելու, մշակելու, կիրառելու և տեղայնացնելու ունակություն, իրականացնելու գիտելիքի սահմաններն ընդլայնող ինքնատիպ հետազոտություն՝ զգալի նյութեր մշակելու միջոցով, որոնց մի մասը հրապարակվել է երկրում և դրա սահմաններից դուրս:
<b>Դատողություններ անել</b>	
1 (բակալավր)	(ընդգրկում է) համապատասխան տվյալների հավաքագրում և մեկնաբանում
2 (մագիստրոս)	(ցուցադրում է) կարողություն ինտեգրելու գիտելիքը, հաղթահարելու բարդ իրավիճակները և ձևակերպելու դատողություններ ոչ լրիվ տվյալների հիման վրա
3 (դոկտոր)	(պահանջում է լինել) ի վիճակի է քննադատական վերլուծության ենթարկել, գնահատել և սինթեզել նոր և բարդ գաղափարներ
<b>Հաղորդակցություն</b>	
1 (բակալավր)	Տեղեկություններ, գաղափարներ, խնդիրներ և լուծումներ
2 (մագիստրոս)	Եզրակացություններ և հիմքում ընկած գիտելիք ու տրամաբանական հիմնավորում (սահմանափակ չափով) մասնագետ և ոչ մասնագետ լսարանի առջև (մենախոսություն)
3 (դոկտոր)	Իրենց գործընկերների, ավելի լայն գիտական համայնքի և հասարակության հետ ընդհանուր առմամբ (երկխոսություն) իրենց փորձառության բնագավառի շուրջ (լայն ծավալով)

<b>Ուսման հմտություններ</b>	
1 (բակալավր)	Մշակել են այնպիսի ուսման հմտություններ, որոնք անհրաժեշտ են իրենց հետագա ուսումն իրականացնելու ինքնուրույնության բարձր աստիճանով
2 (մագիստրոս)	Սովորում են հիմնականում ինքնուրույն կամ անկախ ձևով
3 (դոկտոր)	Ակնկալվում է, որ ակադեմիական և մասնագիտական շրջանակներում կարող են խթանել տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային առաջխաղացումը



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Յու.Լ., Բուդաղյան Ա.Ս., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց. Զեկույց/ Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., Անտարես, 2008, 74 էջ
2. Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում. Զեկույց/ Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Երևան, Փրինթինֆո, 2012, 228 էջ
3. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ
4. Աղաջյան Ռ.Վ., Արզումանյան Կ.Ս., Բալաբանյան Հ.Ա., Մամյան Ս.Զ., Սարգսյան Յու.Լ., «Ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա կրթական ծրագրերի մշակման և վերակառուցման համար մեթոդական ուղեցույց», Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ), Երևան, 2011, 38 էջ
5. Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված (ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի հետ համատեղ) որակի ապահովման պատասխանատուների և պրոֆեսորադասախոսական կազմի թվով 400 ներկայացուցիչների վերապատրաստման նյութեր
6. [www.arlis.am](http://www.arlis.am), [www.edu.am](http://www.edu.am), <http://herearmenia.wordpress.com/>